

## Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան 51-րդ Պատգամատրական ժողովի յայտարարութիւն

Նոյեմբեր 18-19 շաբաթավերջին ընթացքին, Մոնթրէալի եւ Լաւալի Հայ Կեդրոններէն ներս կայացաւ Հ.Յ.Դ. Գանատայի Երիտասարդական Միութեան (ԳԵՄ) 51-րդ պատգամատրական ժողովը, մասնակցութեամբ Մոնթրէալի, Լաւալի, Գէմպրիճի, Վանգուվըրի եւ Թորոնթոյի մասնաճիւղերէն 32 պատգամաւորներու: Սոյն ժողովին ներկայ էին նաեւ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի, Գանատայի Հայ Օգնութեան Միութեան Երջանային Վարչութեան եւ Հ.Յ.Դ. Գանատայի Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ Մարմինի ներկայացուցիչներ:



Շաբաթ առաւօտեան, ժողովը բացուեցաւ Հայաստանի հանրապետութեան քայլերգով, որմէ ետք ժողովականները մէկ վայրկեան յոտընկալս լուծեամբ յարգանքի տուրք մատուցեցին Արցախեան պատերազմին եւ Արցախի ժողովուրդին բռնի տեղահանման ընթացքին նահատակուած զինուորներու եւ քոյրեր-եղբայրներու յիշատակին:

Երկու օրերու վրայ երկարող նիստերու ընթացքին, քննարկման բովէ անցան, քաղաքական, դատարարական, Վանաձորի ամառնային ճամբարի եւ յատկապէս Արցախի եւ Արցախահայութեան իրավիճակին վերաբերող հարցեր: Անոնց լուծման ի խնդիր՝ որոշուեցաւ ծաւալել Գանատայի Երիտասարդական Միութեան ներկայութիւնը համալսարանային գետնի վրայ, համազորակցելով միութեանս տարբեր շրջաններուն հետ:

Ժողովը նաեւ որոշեց նոր թափով լծուիլ Վանաձորի ճամբարի իրականացման եւ նորաստեղծ ծրագրերով Հայաստան գործուողներու աշխատանքներուն՝ հայրենիքէն ներս Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.ի գորակցական ներկայութիւնը ամրապնդելու համար ժողովի աւարտին ընտրուեցաւ նոր Կեդրոնական Վարչութիւն:

Հ.Յ.Դ. ԳԵՄ Գանատայի 51-րդ պատգամատրական ժողով


## Ամերիկա Հայաստանին Արցախէն բռնի տեղահանուածներուն աջակցելու համար 4 միլիոն տոլար պիտի տրամադրէ

Միացեալ Նահանգները 21 Նոյեմբերին, Միջազգային զարգացման գործակալութեան միջոցով հաղորդագրութեան մը միջոցաւ յայտարարեց Արցախի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններէն տուժած մարդոց կարիքները հոգալու նպատակով, առաւել քան 4.1 միլիոն տոլար լրացուցիչ մարդասիրական օգնութիւն տրամադրելու մասին:

Այս մասին հաղորդագրութիւն հրատարակեց Միացեալ Նահանգներու Միջազգային զարգացման գործակալութեան հայաստանեան առաքելութիւնը՝ նշելով, որ այս յաւելեալ ֆինանսաւորման հետ 2020-էն ի վեր Արցախի մէջ ստեղծուած իրավիճակի արձագանգման գծով Միացեալ Նահանգներու մարդասիրական օգնութիւնը կազմած է շուրջ 28 միլիոն տոլար:

Հաղորդագրութեան մէջ կը շեշտուի, որ 19էն 20 Սեպտեմբերին, Արցախի մէջ Ատրպէյճանի ռազմական գործողութեան պատճառով, առաւել քան 100,000 անձեր տեղահանուեցան Հայաստան, այդ պատճառով յառաջացան մարդասիրական անյետաձգելի կարիքներ»:

## «Օգնե՛ք Արցախի ընտանիքներուն»



Կարդալ էջ 8

## Իշխան Սաղաթէլեան հանդիպում ունեցած է Հայաստանի մէջ Գանատայի դեսպանին հետ

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ, ՀՀ Ազգային ժողովի Հայաստան-Գանատա խորհրդարանական բարեկամութեան խումբի նախագահ Իշխան Սաղաթէլեան Նոյեմբեր 24-ին հանդիպում ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան մօտ Գանատայի արտակարգ եւ լիազօր դեսպան Էնտրու Թըրնըրի հետ: Զրուցակիցները մտքեր փոխանակած են Հայաստան-Գանատա յարաբերութիւններու զարգացման հարցերու վերաբերեալ:



Իբրեւ Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խումբի նախագահ, Իշխան Սաղաթէլեան շնորհաւորած է դեսպան Թըրնըրին՝ Հայաստանի մէջ Գանատայի դեսպանութեան բացման առիթով եւ կարեւորած է երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու կայուն զարգացումը:

Իշխան Սաղաթէլեան դեսպանին ուշադրութեան յանձնած է Ատրպէյճանի կողմէ Արցախի մէջ կատարուած ցեղասպանութեան եւ անոր արդիւնքով էթնիկ զտման՝ ակնկալելով կատարուածին վերաբերեալ միջազգային յստակ գնահատական եւ գործնական քայլեր՝ առանց երկիմաստութիւններու:

Բարձրացուցած է նաեւ ռազմագերիներու եւ Արցախի ռազմաքաղաքական դեկավարութեան ապօրինի կալանաւորման եւ անոնց շուտափոյթ ազատ արձակման խնդիրը: Յատուկ անդրադարձ կատարուած է Արցախի հայութեան համալիր իրաւունքներու պաշտպանութեան անհրաժեշտութեան: Մտքեր փոխանակուած են նաեւ Հայաստանի մէջ ժողովրդավարական կառոյցներու կայացման, անոնց զարգացման եւ առկայ խնդիրներու վերաբերեալ:

**HONDA GABRIEL**

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN  
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est  
Montréal-Nord, (Québec) H1G 6C4  
☎ : 514 327-7777



# Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN  
NOW OPEN



Սեփականատեր  
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն  
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները  
ուտելիքներու վերաբերեալ

## IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING  
ROASTING FRESH NUTS  
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA  
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել  
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ  
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել  
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher  
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200  
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



# Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիկ Նուագախմբի համերգային շրջապտույտը, նուիրում Արամ Խաչատրեանի ծննդեան 120-ամեակին՝ Մոնթրեալ

Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիկ Նուագախումբը եւրոպական եւ ամերիկեան համերգային շրջապտույտի քաղաքներից մէկը ընտրել էր Մոնթրեալը: Այն հանդէս եկաւ Կիրակի, 19 Նոյեմբեր 2023-ին:

Ելոյթը տեղի ունեցաւ քաղաքի «Maison Symphonique» ամենակարեւոր համերգասրահում:

Պէտք է յիշատակենք, որ սոյն համերգի թուականի հաստատման օրը յայտարարելուց յետոյ, միայն երկու շաբաթուայ ընթացքում երաժշտասէր հասարակութիւնը ամբողջութեամբ ապահովել էր ներկայութիւնը, ինչը քիչ պատահող երեւոյթ է: Խնամավառութիւնը մեծ էր նման համերգի ներկայ գտնուելու:

Պէտք է նշել նաեւ, որ հայրենիքում այս ճգնաժամային օրերին նման ծրագիր ոտքի հանելն ու իրականացնելը մեծ գոհողութիւնների արդիւնք էր: Նուագախմբի կայուն ու գիտակից կազմակերպչական անձնակազմը, ոչինչ չէր խնայել այն պրոֆեսիոնալ կազմակերպելու համար:

Մոնթրեալում այս համերգի յաջողութեան համար մեծ ներդրում ունեցաւ մոնթրեալահայ ազգային գործիչ, Քեյպէլում Հայաստանի պատուաւոր հիւպատոս Լեւոն Աֆէեանը, իսկ որպէս կազմակերպութիւն իր նիւթական համաստ մասնակցութիւնն էր բերել Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը այս պատուաբեր համերգին:

Յօրեկանական համերգի այս յայտագիրը ընդգրկում էր Արամ Խաչատրեանից զոյգ գործերը՝ «Սպարտակ Բալետ սիուլիթը» եւ «Ջութակի կոնցերտը», տօնելու համար Մեծն Խաչատրեանի ծննդեան 120-ամեակը, իսկ համերգի երկրորդ բաժինը Սերգէյ Ռախմանինովի «Երկրորդ Սինֆոնիան» յիշատակելու սոյն հանրայայտ ծննդեան 150-ամեակը:

Նման յայտագրի կազմումը մեզ բերեց այն գեղեցիկ եզրակացութեան, ուր երկու հանճարեղ երգահանները, որոնք մեծ ներդրում են ունեցել դասական երաժշտական գրադարանին, պիտի յաջորդէին մէկը միւսին, ու ուսմանտիպը պիտի տիրէր մինչեւ համերգի

աւարտը:

«Սպարտակ Բալետը» Խաչատրեանը գրել է 1954-ին եւ ունեցել է շատ հետաքրքիր բեմական առաջընթաց: Յաջորդող 8-ից 10 տարիների ընթացքում այն գրաւել է միջազգային լաւագոյն բեմերը՝ Լեհինկրատից մինչեւ Նիւ Եորք, անցնելով եւրոպական բոլոր բալետի բեմերը:

Այս գործի իւրայատուկ բնորոշումներից մէկը՝ «Սպարտակցիներ»ի հերոսական եւ արդար յեղափոխական կերպարները նկարագրում են հայկական երաժշտական երանգներով, որը մեզ համար կրկնակի հպարտութիւն է:

Մեր նուագախումբը Մայիսի 30-ը երաժշտական թոփփոսների ղեկավարութեամբ առաջին իսկ երաժշտական մուտքի նշանից մեր առջեւ բացեց այնպիսի մի հնչողութեան դաշտ, ուր նուագախմբի իւրօրինակ լուծուած ձայնի որակը անկարելի էր չզգալ: Այն մեծ վարպետութեամբ էր տիրապետում Խաչատրեանական մեկնաբանութեանը եւ բովանդակութեան անթերի կատարողականութեանը: Նուագախումբը կատարեալ ցուցաբերում էր յուզական եւ նրբերանգային Խաչատրեանի բոլոր ցուցմունքները: Գործի ռիթմիկ ճոխութիւնը, բազմաձայնային բարդ երաժշտական դարձուածքները յաջորդում էին միմեանց, եւ հայ երաժշտի իրեն պատկանող իւրաքանչիւր «Նոտա» թրթռացնում էր մեր ներաշխարհը: Այս բոլորի ներդաշնակութիւնը անբացատրելի գեղեցիկ էր:

Բալետի ճոխ հնչիւնները հազիւ ամփոփած, հանդիսատեսը ականատես է լինում ջութակահար Սերգէյ Խաչատրեանի բեմ մուտքին, կատարելու համար Խաչատրեանի «Ջութակի կոնցերտը»: Խաչատրեանական մի ուրիշ իւրայատուկ գործ. 1940-ը Սովետական Միութեան բուռն վերելքի տարիներն էին, ուր Արամ Խաչատրեանը մեծ ազդեցիկ ներկայութիւն սկսեց ձեւաւորել այս գործով: Աշխարհի լաւագոյն ջութակահարները՝ Դաւիթ Օյարաթ, Լէոնիտ Կոզան, Իսահակ Փերրան եւ ուրիշներ, մէկը միւսի յետեւից նուագել են այն բոլոր միջազգային բեմերում եւ գրաւել երաժշտասէր հան-



դիսատեսի սիրտը: Ես անձամբ լսել եմ բոլոր այս մեծերի կատարումը, բայց այս համերգի ժամանակ զգացի այս գործի լիարժէք պատկանելիութիւնը՝ հայ լինելու էութիւնը:

Չոյք Խաչատրեանները միաձուլուած էին իրենց ստեղծագործական եւ կատարողական տաղանդով: Սերգէյի մեկնաբանական արուեստի իւրայատուկ բարձրութիւնը անհասանելի էր, եւ նման երաժիշտները քիչ են: Մենք բախտաւոր ենք նրա նման հայորդի ունենալու համար: Այսօր Սերգէյ Խաչատրեանը համարում է միջազգային հարթակում ամենալաւագոյն տասը ջութակահարներից մէկը: Նրա բեմական ներկայութիւնը իշխում է իր մեծ երաժիշտ լինելու էութեամբ: Հանդիսատեսը կլանուել էր աղեղի սահուն արագութեան եւ հնչիւնների բացարձակ ճշգրտութեան ներքոյ:

Երաժշտութիւն էր հնչում: Ինձ մօտ տպաւորութիւն ձեւաւորուեց, որ այս գործը գրուել է Սերգէյի համար:

Ամբողջ դադարի ընթացքին փորձում էի ամփոփել հնչած երաժշտական գոյների փունջը, բայց այնքան մեծ էր, որ հնարաւոր չէր այն ամբարել մի տեղ:

Համերգի երկրորդ բաժինը մի լայնաշունչ գործ էր մեզ սպասում. Սերգէյ Ռախմանինովի երկրորդ Սինֆոնիան, որը գրուել է 1906-1907 թուականների ընթացքում: Առաջին անգամ այն կատարուել է Սենթ Փեթերսպուրկում 1908-ին, Ռախմանինովի ղեկավարութեամբ:

Ծանր նախաբանով սկսուած այս տիտանիկ չորս բաժնից բաղկացած, մի ժամանոց գործը ի յայտ բերեց մեր Մայիսի 30-ի թոփփոսների եւ երաժիշտների ղեկավարական եւ կատարողական արուեստի բարձր մակարդակը: Թոփփոսները ամբողջ համերգը ղեկավարում էր առանց պարտիտուրի, որը քչերն են անում: Ամբողջ գործի ընթացքում, մենք առնչուած էինք նուագախմբային ստեղծագործական բարձր եւ բարդ արուեստի: Երաժշտական իւրաքանչիւր ֆրագ ամփոփում էր իր մէջ խորը եւ դրամատիկ պատկերներ, եւ հանդիսատեսը կլանուած էր մինչեւ իւրաքանչիւր բաժնի վերջը առանց դժուարութեան:

Այս գործի կատարման այսպիսի որակը մեզ թոյլ է տալիս հպարտութեամբ արձանագրել, որ մեր Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիկ Նուագախումբը դասուում է միջազգային լաւագոյնների շարքում առանց վարանելու:

Ծափահարութիւններ էր հնչում իւրաքանչիւր բաժնից յետոյ, որը նախընտրելի էր չլինել, բայց ես այն չեմ էլ դիտարկում որպէս վրիպում, այլ քաջալերանք գեղեցիկի համար:

Մեծ գոհունակութեամբ դուրս եկանք դահլիճից, բարիի ոգով լցուած, քանի որ, այս օրերին շատ պէտք ունենք դրան: Նորանոր յաջողութիւններ ենք մաղթում:

Պետրոս Ծուժուեան

**RITA BAGHDASSARIAN**  
 Conseillère en Sécurité Financière  
 Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8  
 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262  
 ritabagh@yahoo.com

**VIZUALIS**  
 optométriste

**DR SHANT DONABEDIAN**  
 Centre d'Achat Fairview - Fairview Mall  
 Pointe Claire  
 514 695 2555 - VIZUALIS.CA

**ROYAL LEPAGE**  
 Du QUARTIER

**JESSICA OHANIAN**  
 REAL ESTATE BROKER  
 COURTIER IMMOBILIER

438.838.2626  
 jessica.ohanian@royallepage.ca  
 jessicaohanian.royallepage.ca  
 6971 ch. Côte-de-Liesse, St-Laurent, QC H4T 1Z3

**Assura Bien inc.**  
 Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

**KRIKOR ABRAKIAN**    **VAHAN MATOSSIAN**

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7  
 T: 514.903.3999

Pâtisserie  
**MAHROUSÉ**  
 FONDÉE EN 1970

9705 Boulevard de l'Acadie, Montréal, QC H4N 2W2  
 Tél: 514.279.1629 • info@mahrouse.ca • www.mahrouse.ca

**Seta TOPOUZIAN**  
 Conseillère municipale de Renaud

**Stéphane BOYER**  
 Maire de Lével

514 862-1402 | s.topouzian@laval.ca

**RE/MAX**  
 RE/MAX 3000 inc.  
 Agence Immobilière

**Elie Berberian**  
 Courtier immobilier | Real Estate Broker

**C 514.519.3543**  
**B 514.333.3000**

**HAGOP**  
 REFRIGERATOR REPAIR SERVICE

Call (438) 998-4018

**LEVON BENOHANIAN ET HAGOP KACHICHIAN**  
 PHARMACIENS-PROPRIÉTAIRES

3915, boul. Samson, Laval, Québec, H7W 2G1  
 T 450 688-4111 F 450 681-5525  
 Lundi au vendredi : 8 h 30 à 20 h • Samedi et dimanche : 9 h à 17 h  
 Infirmière (jeudi) : 8 h 30 à 15 h • LIVRAISON GRATUITE

proximlaval@gmail.com    affiliés à Proxim

# Համազգային 95-ամեակ. Հարցազրույց Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենադպիր Լորիկ Սապունճեանի եւ Գանատայի Ծրջանային վարչութեան ատենապետ Թամար Ծահինեանի հետ

Համազգային Հայ կրթական եւ մշակութային միութեան 95-ամեակին առթիւ «Հորիզոն» հարցազրույց մը ունեցաւ Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենադպիր Լորիկ Սապունճեան Ծրջանային վարչութեան ատենապետ Թամար Ծահինեանի հետ, գոր կը ներկայացնենք ստորեւ.

«Հորիզոն».- 2022-ին գումարուած Համազգայինի Պատգամաւորական ժողովէն թիւ 6 որոշումներուն հիման վրայ, յառաջիկայ քառամեակին ի՞նչ պիտի ըլլան Համազգայինի առաջնահերթութիւնները:

Լ. Սապունճեան - 2022-ին գումարուած Համազգայինի Թ. պատգամաւորական ժողովը յաջողեց ամբողջ աշխարհին ու մասնաւորաբար հայրենիքին անցուցած բաւական դժուար հանգրուանին: Համավարակին ու Արցախի պատերազմին հետեւանքները չէին միայն, որ ամբողջութեամբ տակնուվրայ ըրած էին տարբեր կազմակերպութիւններու գործունէութիւնը, այլ նաեւ, Համազգայինի պարագային, Կեդրոնական վարչութեան նստավայրի՝ Լիբանանի, ելեւմտական-տնտեսական տագնապը, իր դառն եւ շօշափելի անդրադարձը ունեցած էր Կեդրոնական վարչութեան գործունէութեան վրայ: Հետեւաբար այս ընդհանուր բովանդակին մէջ էր, որ Պատգամաւորական ժողովը քննեց եւ գնահատեց ընթացաւարտ վարչութեան գործունէութիւնը եւ ըստ այնմ բանաձեւեց իր յանձնարարականները նորընտիր վարչութեան: Բնականաբար, ինչպէս միշտ, Համազգայինը իր ձեւարանները կը պահէ իր առաջնահերթ հոգածութեան ներքոյ, միաժամանակ կարեւոր համարելով կրթական ոլորտին մէջ հայոց լեզուի ու հայոց պատմութեան ուսուցիչներու պատրաստութեան, առցանց դասընթացներու կազմակերպման, հայերէնագիտական դասանիթերու դասագիրքերու պատրաստութեան ծրագրերները, միշտ հետամուտ ըլլալով արեւմտահայերէնի զարգացման: Ժողովը նաեւ որոշեց Կեդրոնական վարչութեան անմիջական հոգածութեան ներքոյ պահել Միջին Արեւելքի տագնապահար գոյգ շրջանները՝ Սուրիան եւ Լիբանանը, գուրգուրալով անոնց հովանիին տակ գործող կառույցներուն, ինչպիսին են Հայկական Հայագիտական Հիմնարկն ու Լիբանանի գեղարուեստի դպրոցները:

Կազմակերպական առումով այս Կեդրոնական վարչութիւնը պիտի ուսումնասիրէ արեւմտեան եւ արեւելեան Եւրոպաներու մէջ Համազգայինի առկայ կառույցներու գործունէութեան վերաշխուժացման հեռանկարն ու հնարաւորութեան պարագային հիմնադրէ նոր կառույցներ: Պիտի ուսումնասիրէ Ռուսիոյ եւ Հարաւային Ամերիկայի հայկական գաղութներուն մէջ Համազգայինի գործունէութեան կարելիութիւնները: Պիտի վերանայի Համազգայինի յառաջիկայ տասնամեակին մտապատկերը եւ յստակ ռազմավարութիւն մշակէ, քայլ պահելով սփիւռքի եւ հայրենիքի զարգացող պահանջներուն եւ արագընթաց փոփոխութիւններուն հետ: Այս բոլորին կողքին Կեդրոնական վարչութիւնը նախանձախնդիր կը մնայ շարունակելու իր գործունէութեան սիւները հանդիսացող հրատարակչական ու գրատարածի աշխատանքները, եւ աւելի քան 60 տարի հոսանքն ի վեր թիւովարդ «Բագին» գրական գեղարուեստական պարբերաթերթը, որուն ամբողջ արխիւը արդէն թուայնացած է իր կայքէջին վրայ: Վարչութիւնը պիտի շարունակէ կազմա-

կերպել իր երիտասարդական հաւաքները, ի հարկին վերաձեռնած ձեւաչափերով: Այս պատգամաւորական ժողովը նաեւ պարտք դրած է Կեդրոնական վարչութեան վրայ միութիւնը օժտել դրօշակով, օրհներգով եւ նշանաբանով: Դրօշը արդէն ստեղծուած է, եւ ՆՕՏՏ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին կողմէ օրհնուել է հոգ, հասած է բոլոր շրջաններուն, իսկ նշանաբանի կամ բնաբանի եւ օրհներգի որդեգրումը արդէն ընթացքի մէջ են:

«Հորիզոն».- Գիտեմք տիկին Լորիկ, որ Պէյրութի մէջ կը գործէ Համազգայինի Մեյլնֆրոն եւ Հայկ Արսլանեան նեմարանը, Աւստրալիոյ մէջ՝ Արշակ եւ Սոֆի Գոլստըն նեմարանը, իսկ Ֆրանսայի մէջ՝ Մարսէլի նեմարանը: Արդե՞՞ք ժամանակը հասած է, որ Գանատայի կամ Հիւսիսային Ամերիկայի մէջ եւս Համազգայինը ունենայ նման կրթական հաստատութիւն մը:

Լ. Սապունճեան .- Գիտէ՞ք, որ հայ դպրոց պահելը մեծ գոհողութիւններ կ'ենթադրէ, եւ գանատահայրենի համար ուրախութիւն ու հպարտութիւն է, երկրի մեծագոյն գոյք քաղաքներուն մէջ ունենալ մինչեւ երկրորդական ամէնօրեայ մրցունակ վարժարաններ՝ Մոնթրէլ-այլ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանն ու Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանը: Նոյնն է պարագան Միացեալ Նահանգներու Արեւմտեան ափին մէջ, ուր արդէն իսկ կը գործեն հայկական երկրորդական վարժարաններ, Արեւելեան ափն ալ իր կարգին ունի ամէնօրեայ վարժարաններ, հետեւաբար ներկայիս Հիւսիսային Ամերիկայի մէջ Համազգայինը ճեմարան հիմնելու ծրագիր չունի, այլ կը հաւատայ, որ թէ՛ այդ շրջաններու իր կառույցներով, թէ՛ իր հրատարակութիւններով, դասագիրքերով, դաստիարակչական ծրագրերներով ու խաղերով կրնայ գործող վարժարաններուն նեցուկ կանգնիլ: Միւս կողմէ, Համազգայինի շրջապատին կողմէ յաճախ փափաք կը յայտնուի Հայաստանի մէջ Համազգայինի ճեմարան, կամ գէթ՝ մանկապարտէզ մը հիմնելու. պէտք է ըսել, որ նման որոշում Համազգայինի գերագոյն՝ պատգամաւորական ժողովը կրնայ առնել միայն: Ներկայիս Համազգայինը Մոսկուայի մէջ նաեւ ունի երեք միօրեայ վարժարաններ, իսկ ուրախութեամբ կը յայտարարենք, որ եկող ամիսներուն իր աւարտին կը հասնի Մարսէլի ձեմարանի նոր շէնքի կառուցման աշխատանքները, որուն հիմնարկէքը կատարուած էր Հոկտեմբեր 2022-ին: Մարսէլի պարագային, ձեմարանի ներկայ կառույցը արդէն նեղ կու գար, եւ դպրոցը դժբախտաբար ստիպուած կ'ըլլար մերժելու նոր աշակերտները: Հետեւաբար կառուցուող նոր շէնքը առիթ պիտի ընձեռէ, որ աւելի մեծ թիւով աշակերտներ ընդունի ձեմարանը: Աւստրալիոյ Արշակ եւ Սոֆի Գոլստըն ձեմարանն ալ կը գործէ Աւստրալիոյ Ծրջանային վարչութեան հովանիին ներքոյ, Կեդրոնական վարչութեան հսկողութեամբ: Կեդրոնական վարչութիւնը նաեւ հետամուտ է Ֆրանսայի Իսի Լէ Մուլինո շրջանի Համազգային թարգմանչաց վարժարանը, անուանականէն աւելի գործնական եւ որակաւորման իմաստով զարգացնելու: Սակայն Կեդրոնական վարչութեան գործունէութեան առաջնահերթութեան առեւծի բաժինը կը կազմէ Պէյրութի Մեյլնֆրոն եւ Հայկ Արսլանեան ձեմարանը, իր մանկապարտէզով եւ վերջին տարիներուն կառուցուած մանկամասերով, որ Լիբանանի տնտեսական-ելեւմտական, ապահովական ու քաղաքական տագնապներուն

բերումով բաւական դժուար մարտահրաւերի վերածուած է, նկատի ունենալով Պէյրութի ձեմարանի դերակատարութեան կարեւորութիւնը եւ անոր անխափան երթը ապահովելու անհրաժեշտութիւնը:

«Հորիզոն».- Համազգայինը բնորոն գործունէութիւն կը ծաւալէ Հայաստանի մէջ, վերջին տարիներուն՝ Արցախի մէջ եւս. օրինակ՝ վերջերս լոյս տեսաւ արցախցի լուսանկարիչ Դաւիթ Ղաիրամանեանի «Արցախ. անաւարտ պատերազմ» պատկերագիրքը եւ այլն: Ներկայ պայմաններուն մէջ, տիկին Լորիկ, Համազգայինը ինչպէ՞ս պիտի ներառէ Արցախէն բռնագաղթի ենթակուած արցախցիները իր ծրագրերուն մէջ:

Լ. Սապունճեան .- Այո՛, ճիշդ էք, Համազգայինը, Հայաստանի վերանկախացումէն անմիջապէս հետ, Երեւանի իր գրասենեակին ճամբով իր կազմակերպած գիտաժողովներով, հրատարակութիւններով եւ բազմաբնոյթ այլ ծրագրերներով ներկայութիւն է Հայաստանի մէջ: Ուրախութեամբ պէտք է ընդգծել, որ անցեալ տարի Երեւանի գրասենեակին կողքին հաստատուեցաւ նաեւ Կիւմրիի գրասենեակը, որ իր կարգին աշխոյժ գործունէութիւն ունի արդէն: Իսկ ինչ կը վերաբերի Արցախին, 2017 թուականէն ի վեր Համազգայինը մշտական ներկայութիւն էր հոն, երբ հաստատուեցաւ Համազգայինի Արցախի գրասենեակը: Գրասենեակը մինչեւ 2020 թուականի պատերազմ, բեղուն գործունէութիւն կը ծաւալէր գրեթէ Արցախի ամբողջ տարածքին, եւ կարճ ժամանակի մէջ կրցած էր իր շուրջ համախմբել արցախցի հրատարակագիրներ, երիտասարդ գրողներ ու արուեստագէտներ, եւ յաջողած էր կազմակերպել մշակութային բազմաթիւ նախաձեռնութիւններ՝ ուղղուած երիտասարդներուն, պատանիներուն եւ մանուկներուն, առանց մոռնալու նաեւ հեռաւոր կամ սահմանամերձ շրջանները, ուր գրասենեակը նախանձախնդիր էր մշակութային կեանքը վառ պահելու, այդ շրջաններու բնակիչներն ու երեխաները հաղորդ դարձնելով հայ մշակույթին՝ թատերական, երաժշտական թէ՛ այլ ծրագրերներով: Սակայն 2020-ի պատերազմը նոր կացութիւն մը պարտադրեց, որուն հետեւեալով Արցախի գրասենեակը ունեցաւ նոր առաջնահերթութիւններ: 44-օրեայ պատերազմի օրերուն ստեղծուեցաւ «Համազգայինը՝ Արցախի մանուկներու կողքին» ծրագիրը՝ նիւթական հովանաւորութեամբ գլխաւորաբար Համազգայինի Գանատայի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան ափերու Ծրջանային վարչութիւններուն, թիրախ ունենալով այդ օրերուն յանձնուած շրջաններէն տեղահան եղած ընտանիքներուն եւ մասնաւորաբար մանուկներուն հոգեմտաւոր առողջութիւնը: Արուեստը որպէս հոգեբանական դարմանումի միջոց օգտագործելով, մասնագէտներու հսկողութեամբ մշակուեցաւ կրթական մշակութային ծրագիր, կազմուեցան արուեստի խմբակներ՝ նկարչութեան, կաւագործութեան, թատերական եւ շաքարեղանի հանդիպումներ՝ հոգեբանի հետ, որոնց կողքին կազմակերպուեցան նաեւ մանուկներու այցելութիւններ թանգարաններ, թատրոններ: Սկիզբը այս խմբակները կը գործէին Երեւանի, Դիլիջանի եւ Աբովեանի մէջ, սակայն երբ երեխաները պատերազմէն հետ սկսան վերադառնալ Արցախ, ծրագիրը պէտք էր տեղափոխել Արցախ, եւ որովհետեւ մեծ թիւով երեխաներ Հաղարկէն, Շուշիէն եւ Ատրպէյճանի կողմէ գրաւուած միւս շրջան-

ներէն էին, չկրցան վերադառնալ, հետեւաբար արուեստի խմբակները շարունակուեցան վերոյիշեալ քաղաքներուն մէջ: Ասոնց կողքին Ստեփանակերտի մէջ սկսաւ գործել արուեստի խմբակ, ինչպէս նաեւ՝ դասապատրաստման խմբակներ, ուր դպրոցէն հետ երեխաները ուսուցիչներու օգնութեամբ սերտորոնթեան պահեր կ'ունենային: Ամբողջ արուեստի խումբեր կազմուեցան քանի մը գիւղերու մէջ եւս:

Բնականաբար այս ծրագիրը նոր թափ եւ ծաւալ ստացաւ Սեպտեմբեր 2023-ին, Արցախի ամբողջական յանձնումէն հետ: Համազգայինը անմիջապէս անցաւ գործի, Հայաստանի ու Արցախի իր գրասենեակներուն անձնակազմին կողքին, Հայաստանի գործուղեց Լիբանանի գրասենեակի իր գործավարը, որպէսզի աշխատանքը արագօրէն ծրագրուի, եւ անմիջապէս Հայաստանի տարբեր մարզերու մէջ վերսկսան Հայոց լեզուի եւ գիտելիքներու ամրապնդման դասընթացները, 9-12-րդ դասարանի աշակերտներուն համար, անոնց օգնելով նախապատրաստուելու աւարտական ու ԲՈՒՀ-ական քննութիւններուն: Այս խմբակները ներկայիս կը գործեն Աբովեան եւ Մասիս քաղաքներուն մէջ: Իսկ Երեւանի եւ Կիւմրիի մէջ կազմուեցան տիկնիկագործութեան խմբակներ, տիկնիկներու պատրաստութեան կողքին, երեխաները արցախեան բարբառը չմոռնալու համար, բարբառով կը կարգան ու կը բեմադրեն հեքիաթներ: Համազգայինի Երեւանի գրասենեակին հետ գործակցաբար կը շարունակուին չափազանց կենսական՝ հոգեբանական աջակցութեան անհատական ու խմբային հանդիպումները մանկական հոգեբանի հետ: Կը նախատեսենք, որ «Համազգայինը՝ Արցախի մանուկներու կողքին» ծրագիրը ա՛լ աւելի պիտի ընդարձակուի յառաջիկայ ամիսներուն ընթացքին, եւ այդ նպատակով կ'ապաւինինք բոլորին աջակցութեան, եւ կարելի է այցելել Համազգայինի մեր կայքէջի նուիրատուութիւններու բաժինը, այս յոյժ կարեւոր ծրագրերին օժանդակելու համար: <https://hamazkayin.com/en/about-us/donate/>

Ներեցէ՛ք, որ բաւական երկարեցի պատասխանք, բայց անպայման ուզեցի անդրադառնալ այս ծրագրերին: Ինչ կը վերաբերի արցախցի երիտասարդ լուսանկարիչ Դաւիթ Ղաիրամանեանի «Արցախ. անաւարտ պատերազմ» պատկերագիրքին, անիկա իրականացաւ շրջափակման պայմաններուն մէջ եւ հրատարակուեցաւ եռալեզու ծանօթագրութիւններով՝ հայերէն, անգլերէն եւ ռուսերէն, նպատակ ունենալով զայն հասանելի դարձնել օտար հանրութեան, միջազգային քաղաքական ու դիւանագիտական շրջանակներուն, որովհետեւ այդ հատորին մէջ ամփոփուած էին 44-օրեայ պատերազմին, անոր յաջորդող շրջանին, եւ շրջափակման տասը ամիսներուն ընթացքին ժողովուրդին կեանքն ու դժուարութիւնները հարազատօրէն ներկայացնող պատկերներ: Գիրքի շնորհանդէսն ալ տեղի ունեցաւ 11 Սեպտեմբեր 2023-ին, Երեւանի մէջ, Համազգայինի 95-ամեակի նշման ձեռնարկներու ծիրէն ներս: Դժբախտաբար լուսանկարիչը այդ օր տեսակապով միացաւ շնորհանդէսին, սակայն անկէ շաքարժ մը հոգ արդէն տեղահանուած ժողովուրդին հետ Հայաստան էր:

Հարկ կը զգամ հոս խօսելու այլ կարեւոր հրատարակութեան մը (կամ հրատարակութիւններու) մասին, որուն աշխատանքը արդէն սկսած էր շուրջ տարի մը առաջ: Խօսքս «Արցախ. վտանգուած ժառանգութիւն» բովանդակային հատորին մասին է, որ Համազ-

գայինի պատուէրով պատրաստուեցաւ Սամուէլ Կարապետեանի հիմնած «Հայկական Ճարտարապետութիւնը Ուսումնասիրող Հիմնադրամի» փոխ տնօրէն Բաֆֆի Քորթոնի կողմէ: Հատորը նոյնպէս եռալեզու է եւ կ'անդրադառնայ 2020-ի պատերազմին հետեւանքով Ատրպէյճանի հակազին տակ անցած մեր պատմաձկութեան վտանգուած կոթողներուն, անոնց պատմութեան եւ ներկայացուցած արժէքին: Սակայն գիրքը տպարան յանձնելէն քանի մը օր առաջ, երբ մենք կորսնցուցինք ամբողջ Արցախը, որոշուեցաւ գիրքը վերանուանել «Արցախ. վտանգուած ժառանգութիւն 1»՝ առաջին հատոր, որուն պիտի յաջորդէ երկրորդ հատորը՝ 2023-ին Արցախի մնացեալ յանձնուած շրջաններու պատմաձկութեան հարուստ ժառանգութիւն համարուող վայրերուն մասին: Երկրորդ հատորին աշխատանքը արդէն մեկնարկուած է, սակայն անիկա ալ իր կարգին պիտի ըլլայ բաւական ծաւալուն, հետեւաբար քանի մը ամիսէն նաեւ լոյս կը տեսնէ երկրորդ հատորը:



ճամբով պահպանել հայ մշակոյթը եւ սատարել անոր զարգացման: Շրջանային Վարչութիւնը նաեւ յատուկ ուշադրութիւն կը դարձնէ միջ-մասնաճիւղային գործունէութեանց եւ ձեռնարկներու բաժնեկցութեան:

Նախ նշեմ, որ վարչութիւնս կապ կը պահէ ԱՄՆ-ի Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններու Շրջանային վարչութիւններուն հետ, որոնց հետ տարեկան գրութեամբ կը կազմակերպէ երիտասարդական ArtLinks ծրագիրը: Այս երիտասարդական ցանցի հաւաքները կը շարունակուին Հիւսիսային Ամերիկայի հայկական մշակոյթով խանդավառ երիտասարդները ընտրանի հայ արուեստագէտներու հետ: Այս տարի, հաւաքը տեղի ունեցաւ Գալիֆորնիոյ մէջ, իսկ յառաջիկայ տարի կը նախատեսենք զայն կազմակերպել Արեւելեան Ամերիկայի մէջ: Տարեկան գրութեամբ տեղի ունեցող այս չորսօրեայ հաւաքները, 21-35 տարեքի երիտասարդներուն կը տրամադրեն երկխօսութեան միջավայր մը համբաւաւոր հայ արուեստագէտներու հետ, որոնք կու գան ստեղծագործական գրականութեան, երաժշտութեան, թատրոնի, պարարուեստի, սինեմայի, լրագրութեան եւ քարոզչական արդի միջոցներու բնագաւառներէն:

Կեդրոնական վարչութեան ծրագիրներէն մէկն է Համազգային ուսանողական հաւաք (Forum)ը, որուն հիմնական նպատակը հայ համայնարանական ուսանողներու կամրջումն է: Շրջանային վարչութիւնը ամէն ջանք ի գործ կը դնէ, որպէսզի Գանատայի ուսանողներ եւ մաս կազմեն տարեկան այս հաւաքին, որ տեղի կ'ունենայ Հայաստանի մէջ, ամէն տարուան Յուլիս ամսուն, ուղարկելով 1-3 մասնակից, հոգալով անոնց օգնական ծախսերը՝ մասնաճիւղերուն օգնութեամբ:

Վերջերս իրագործեցինք Լեւոն Շանթ հայերէնագիտական դասընթացքը, որ կը միտի համալրելու զարգացնել հայկական վարժարաններէ շրջանաւարտներու արեւմտահայերէնի, հայերականութեան եւ մշակոյթի իմացութիւնը: Դասընթացքները կը կազմակերպէ յատուկ յանձնախումբ մը, սակայն կը համակարգուին ու կը ղեկավարուին դոկտ. Վիգէն Թիւֆէնքճեանի կողմէ: Դասընթացքի տեսողութիւնն է երկու տարի, իսկ դասաւանդողները կ'ըլլան Մոնթրէլ կամ այլուր պարող դասախօսներ, որոնք ունին ներկայացուած դասանիւթերուն համապատասխան մասնագիտութիւն: «Լեւոն Շանթ» հայերէնագիտական դասընթացքը կը վայելէ «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան» հայկական բաժանմունքի մասնակի հովանաւորութիւնը:

Լեւոն Շանթ հայերէնագիտական դասընթացքին հիմնարկի վերածուած միջոց ալ մաս կազմած է Շրջանային վարչութեան եւ դասընթացքը կազմակերպողներուն հեռանկարին: Առ այդ, դասընթացքին Ա. շրջանին գտած յաջողութիւնը փաստեց, թէ բոլոր տուեալները ունինք այդ հեռանկարը շօշափելի իրականութեան վերածելու, իսկ Կիւլ-

պէնկեան Հիմնարկութեան տրամադրած յատկացումները ամուր հիմերու վրայ դրին մեր առաջադրութիւնը: Վերջապէս յայտնենք, որ անցնող տարուան ընթացքին, դասընթացքի յանձնախումբը սկսաւ հիմնարկի մասին իր պատկերացումները բանաձեւել եւ յաջորդ հանգրուանին պիտի ուսումնասիրէ հիմնարկի ստեղծման օրինական հարցերը:

Հրատարակչական ասպարէզէն ներս ունինք «Օշական» մատենաշարը, որ առաջնահերթութիւն կու տայ գլխաւորաբար հայերէնով գեղարուեստական գրականութեան եւ ուսումնասիրական վերլուծական տիպի գործերու: Առ այսօր հրատարակած ենք Շուշանեանի «Ալեկոծ տարիներ»ը, Ջարեան/Տառելի «Կղզին եւ մի մարդ»ը: Անգլերէնի թարգմանած ենք Դ. Վարուժանի «Հացին երգը» / «Song of the Bread» եւ Ե. Ջարեանի «Հրավառ հոգիներ» / «Souls on Fire» գիրքերը: Հրատարակած ենք նաեւ «Պատանեկան Օրագիր» մանկապատանեկան գիրքը: Մօտօրէն լոյս պիտի տեսնէ նաեւ Վազգէն Էթիէմեզեանի գործերը ամփոփող հատոր մը: Վարչութիւնս բարոյական աջակցութիւն կը ցուցաբերէ անհատ մտաւորականներու, հովանաւորելով անոնց անձնական հրատարակութիւնները, որոնք տպագրուած կ'ըլլան հեղինակներու ջանքերով, առանց Համազգայինի նիւթական աջակցութեան: Ասոր կողքին Շրջանային վարչութիւնը կը նախաձեռնէ եւ կը համադրէ մեծ թիւով գիրքեր եւ հայկական իրեր, դաստիարակչական խաղեր ու պոլիպիկներ ապսպրելու աշխատանքը, Լիբանանէն եւ Սուրիայէն նաեւ Գանատա հասցնելու համար:

Տարեկան գրութեամբ նաեւ Գա-



նատայի Շրջանային վարչութիւնը կը կազմակերպէ սկսնակ եւ յառաջացած խօսակցական հայերէնի առցանց դասընթացքներ, որոնց պատրաստութիւնն ու դասաւանդումը ստանձնած է հայերէնի փորձառու ուսուցչուհի տիկ. Սալբի Գասպարեան Ներիկեանը:

Իսկ վարչութեանս նախաձեռնած Շարագրութեան մրցոյթը կը նպատակադրէ քաջալերել հայ մանուկ ու պատանին՝ հայերէնով գրական փորձեր կատարելու: Բոլոր մասնակցողներուն գրութիւնները կը հրատարակուին ընկերային ցանցերու վրայ, իսկ դատական

կազմին կողմէ ճշդուած առաջին երեք դիրքերը գրաւողները կը ստանան պարգեւներ: Այս տարի իրենց մասնակցութիւնը բերին Գանատայի տարածքին բոլոր հայկական ամէնօրեայ վարժարաններու 8-րդ կարգի աշակերտները եւ Շարագրեայի պարագային աւարտական կարգի աշակերտները: Յառաջիկայ տարեշրջանին, վարչութիւնս կը մտադրէ շարագրական փոխարէն այլ հմտութեան մը առնչուած մրցոյթ մը կազմակերպել:

Նշեմ, որ վարչութիւնս մօտէն կը գործակցի Կեդրոնական վարչութեան հետ եւ կը նպաստէ անոր բոլոր ծրագիրներուն իրագործման: Սերտ յարաբերութիւն կը մշակէ տագնապահար այլ շրջաններու հետ՝ ինչպիսին են Լիբանանն ու Սուրիան: Անցեալ տարեշրջանին Գանատայի շրջանը որդեգրեց Լիբանանի գեղարուեստի դպրոցներէն հարկը աշակերտ, հոգալով իրենց տարեկան թոշակը եւ Ամանորի առթիւ նուէր գումար յատկացուց Պէյրութի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանի անձնակազմին: Այս տարեշրջանին, վարչութիւնս որոշեց կրկնել Գանատայի նուիրատուութիւնը Լիբանանի գեղարուեստի դպրոցներուն եւ ցանկին վրայ աւելցուց նաեւ Հայկ պի «Բարսեղ Կանաչեան» երաժշտանոցի աշակերտները: Վերոնշեալ նուիրատուութիւններուն իրենց մասնակցութիւնը կը բերեն մեր չորս մասնաճիւղերու վարչութիւնները: Այս տարի, առաջին անգամ ըլլալով, Շրջանային վարչութիւնը Օթթաւայի Շարագրեայ վարժարանի 27 աշակերտներուն տարեկան հանդէսին նուիրեց հայերէն լեզուով մանկական գիրքեր: Ինչպէս անցեալին, այս տարի եւս Համազգայինը իր մասնակցութիւնը պիտի բերէ Կեդրոնական վարչութեան «Համազգայինը՝ Արցախի մանուկներուն կողքին» ծրագրի ծախսերուն:

Քարոզչական գետնի վրայ վարչութիւնս ունի իր կայքէջը՝ Hamazkayin.ca, դիմատետրի էջը՝ Hamazkayin Canada, իր գործունէութեան մասին իբրեւ քարոզչական միջոց կ'օգտագործէ նաեւ «Հայ Հորիզոն» եւ «Նոր Հայ Հորիզոն» պատկերասփիւռի ծրագիրները, «Թորոնթոյայ» ամսագիրն ու «Հորիզոն» շաբաթաթերթը, ինչպէս նաեւ Համազգայինի կեդրոնական կայքէջը:

Նկատի առնելով որ Շրջանային վարչութիւնը ընդհանրապէս յաճախակի ձեռնարկներ չի կազմակերպեր, չխաչածեւելու համար իր մասնաճիւղերու գործունէութիւնը, կը բաւարարուի ցենզերու եկամուտով եւ տարեկան մէկ հասութեաբեր ձեռնարկի կազմակերպութեամբ: Ուրախ ենք յայտարարելու նաեւ, որ այս տարեշրջանին, Շրջանային վարչութիւնը, համագործակցելով Ազգային Առաջնորդարանի Հայեցի Դաստիարակութեան խորհուրդին հետ, կազմակերպեց «Ասմունքի երեկոյ» մը, ինչպէս նաեւ Մոնթրէլի Հայ կեդրոնին հետ՝ նկարչական գործերու ցուցահանդէս մը:

Հարցազոյցը վարեց՝ Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Voyages HAIG Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊՐ ԼԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐՍԳՈՅՆ ԳԻՆԵՐ

\*Նոր Յաղթ\* PERMIS DE QUÉBEC

Voyages Haig Travel 4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: +1 514-284-7676 Email info@haigtravel.ca

# Մէկ Եւ Նոյն Ազգի Լիճելութեան Հրամայականները

ԱԶԳԻ ՆԵՐԿԱՆ ԵՒ ԳԱԼԻՔԻ ԻՆՔՆԵԿ ԶԵՆ, ԿԸ ԿԱՌՈՒՅՈՒԻՆ: Ազգ եւ հայրենիք ի վերուստ տրուած չեն, վերջնական եւ ինքնեկ չեն: Անոնք մարդոցմով կը յառաջանան, կը պահուին եւ կը տեւեն: Եթէ փորձենք հետեւիլ ազգերու պատմութեան ընթացքին, հասկնալ այն, ինչ որ անոնք ապրած են եւ են, կը սորվինք, որ ազգը կը ստեղծուի, կը կառուցուի եւ կը պահուի ժամանակի ընթացքին ինքնութիւն կերտող եւ անոր տէր կանգնող մարդոցմով, ժողովուրդով, այդ ինքնութիւնը ամփսի վրայ չի հրամայուիր:

Կրաւորականութեամբ եւ ենթակայութեամբ ազգ չի պահուիր:

Հայկական հաւաքականութիւնները, բոլոր միջօրէականներու եւ գուգահեռականներու տակ, իրենք իրենց համար ստեղծած են եւ կը ձգտին իրենք իրենց համար ստեղծել «կեանքի լաւ պայմաններ», ինչպէս ընդունուած է ըսել, այդ նպատակով ալ կը հանգրուանին մոլորակի այս կամ այն անկիւնը, ան ըլլայ ծանօթ թէ անծանօթ, հասնելով հարաւային բեւեռէն անմիջապէս առաջ գտնուող Ուշուսայ քաղաքը, հրախալի բեւեռի Քիրունայի երկաթի հանքերը, ինչպէս՝ Ափրիկէի Թոկո քաղաքը, ուր կը ստեղծեն «Երեւան սուպերմարքէտ», եւ կամ «Տեխաս»-ի մէջ իրենք գիրենք կ'օժտեն գեղակառոյց եւ նպատակաւոր եկեղեցիով: Բազմապատկեցէ՛ք այս «կառույցները», գումարեցէ՛ք թանգարանները, ինչպէս՝ Լիզպոնի «Գալուստ Կիւլպենկեան» թանգարանը, եւ՝ դեռ արուեստի, մշակոյթի եւ գիտութեան մեծանուններու վաստակը, որով ինքնասիրութիւն կը շոյենք, բայց չենք ըմբռներ, որ անոնք ուրիշ սեփականութիւն են: ՄԵՆՔ-ի մէջ չեն: Այս կացութիւնները կը վերաբերին անհատներու, ինքնախաբէութիւն է ըսել, որ անոնք իրողապէս ազգային են, մեղմասացութեամբ՝ անոնք թաղային են, կամ քայլ մըն ալ առաջ երթալով՝ համայնքային են:

Վերջերս լոնտոնաբնակ Ասատուր Կիզէլեան համայնքով ուշադրաւ յօդուած մը հրատարակեց, շուրջ 50 էջ: Կ'արտագրեմ արկածախնդրական պատմութեան նմանող յօդուածին խորագիրը եւ առաջին քանի մը տողերը.

«Հէ ԴԿԱՀԱՅ ԿՏԱԿՆԵՐՈՒ «ԱՌԱՍՊԵԼԸ ԵՒ ՀԵՌԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԱՊԱՏՅԱՆ ՀԱՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ»: Ըսուած է, որ «Հեռուոր արեւելք»-ի մէջ ներառուած են հետեւեալ երկիրները. (Հնդկաստան, Պրմաստան, Մալեզիա, Ինտոնեզիա, Սինկափուր, Չինաստան): «Երեբունի» եկեղորոնային թերթի 5 նոյեմբեր 2022-ի թիւին մէջ հրատարակուեցաւ Յակոբ Միքայէլեանի «Հնդկաստանի հայոց մարդասիրական ճեմարանը» յօդուածը, ուր հեղինակը անդրադարձած է նաեւ մեծահարուստ հնդկահայ վաճառականներու կտակներուն»:

Յօդուածը մտածելու առիթ պէտք է ըլլայ ոչ միայն անցեալի մասին, այլ մանաւանդ՝ մեր ներկայի, որ անմիջական գալիքն է, որպէս հանրային քաղաքական դաստիարակութեան եւ քաղաքական մտածողութեան առարկայ:

Կը կարդամ. «Ա. Աշխարհամարտի աւարտին տեղեկութիւններ սկսան շրջագայիլ, ըստ որոնց, Հնդկաստանի մէջ յայտնաբերուած էին մեծահարուստ հայ վաճառականներու տասնեակ միլիոն սթերլինկ գնահատուող կտակները, որոնք պահ դրուած էին անգլիական դրամատուներու մէջ: 1950-ական թուականներուն «Պուլպուլեան» մականունով հնդկահայ վաճառականի մը «կտակ»-ին գիւտը մեծ աղմուկ բարձրացուց, յատկապէս՝ Միջին Արեւելքի մէջ: Այդ կտակներուն ակնարկելով՝ Միքայէլեան կը գրէ. «Այստեղ կրկին հարց կը ծագի՝ որո՞նք ժառանգեցին այդ վաճառականներուն հարստութիւնները, որոնք դիզուած էին անգլիական դրամատուներուն մէջ, թէ՛ աստղաբաշխական գումարներու հասած այդ գումարները անժառանգ մնալով՝ կու գացին օտարներուն, ո՞վ գիտէ»:

Մէկ բան գիտենք. նշուած «աստղաբաշխական» գումարները, ինչպէս ըսուած է, «կու գացին օտարներուն»:

Ինչ որ չենք կրնար արժեւորել եւ գիտնալ, նաեւ այն է, որ հայ միտքի եւ տաղանդի հարստութիւններն ալ կու գացած են եւ կը շարունակեն կու երթալ հայութենէն դուրս տեղեր, անոնք ըլլան անանուն անհատներ թէ հաստատութիւններ, մեզի ձգելով Միջափառութեամբ՝ անոնց յիշատակութեամբ ուրախանալու անբովանդակ եւ մակերեսային ուրախութիւնը: Ասատուր Կիզէլեանի գրութեան առթած մտածումները եւ զգացումները կարելի է երկար խորհրդածութիւններու առարկայ դարձնել՝ բան չըսելու եւ տեղ չհասնելու համար: Յետո՞յ: Իրատեսական պարզ հաստատում մը.

ԱԶԳԻ ԳԱԼԻՔ-ը կը կառուցուի: Ներկան է, ինչ որ է, անոր նկատմամբ ինչ ալ ըլլան մեր արժեւորումները, մէկ բան որոշ եղած է եւ է. մարդկութիւնը բաղկացած է մարդոցմէ, որոնք արեւուն տակ տեղ կ'ուզեն, այդ տեղը ունենալ, պահել, անոր տիրութիւն ընել, ինչպէս կ'ընեն անասունները՝ գծելով իրենց կենսատարածքը. մարդոց պարագային, քաղաքակրթութեան յառաջացումը սահմանները եւ ազդեցութեան գոտիները այդպէս են, այդպէս յառաջացած են ազգերը եւ հայրենիքները, որոնք հաւաքական ինքնահաստատման արդիւնք եւ երաշխիք են: Զոյք եղբերը՝ «հաւաքական» եւ «ինքնահաստատում», կը խտանան եւ կ'ապրուին՝ որպէս հայրենիք, քաղաքակրթութիւն-մշակոյթ, ինքնութիւն, համագումար՝ քաղաքականութիւն, որ ազգային իրաւութիւն կը նուաճէ հայրենատիրութեամբ, որպէսզի ազգը մնայ եւ տեւէ, անհետ չկորսուի, չըլլայ սոսկ «հնաբանական» առարկայ:

Մեր անմիջական ներկային մէջ պէտք է պատասխանենք հետեւեալ հարցման. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՈՒՌՔԸ ԿԸ ԳՈՐԾԵ՞Ն ԱԶԳԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԼԻԱԿԱՍԱՐ ՎԵՐԱԿԱՆ ԳՆՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ: Պէտք է պատասխանել եւ դիրքորոշուիլ իրատեսութեամբ, իրաւ յանձնառութեամբ, առանց ճապկումներու:

Հաւելորութենէ տառապող պէտք է ըլլալ չտեսնելու եւ չհասկնալու համար, որ այսօր հայ ժողովուրդը կանգնած է գոյութեանական աղէտի առջեւ: Երբեմն բեմբասացը կը կրկնէ Շէյքսպիրի «Լինել-չլինել» տարազը: Անհատներ կրնան տեւել, պատշաճիլ, դառնալ հոչակաւոր, տարբեր աշխարհներու մէջ, տարբեր անուններով: Այդքան: Վերջ կրնա՞նք տալ անհատականի եւ հաւաքականի շփոթին: Ազգի անմիջական պատմութիւնը պէտք է թելադրէ այն միտքը, որ ազգը՝ որպէս մէկ ամբողջ, հանրապետութիւն եւ սփիւռք, կը գործէ՞, եւ ինչպէ՞ս, լիակատար վերականգնման առաջադրանքով: Յոգնակիացած սփիւռքը, որ տեսականօրէն ազգի համարների մեծամասնութիւնն է, արհամարհելի եւ արհամարհուած լրացուցիչ հանգամանք պէտք է չըլլայ, պէտք է ըլլար՝ ո՛չ ինքնիրեն համար, ո՛չ ալ Հայաստանի բեկոր տարածքի հանրապետութեան եւ հոն ապրող ժողովուրդին համար: Ինչ կը վերաբերի «սփիւռք» ընկերաքաղաքական եւ մշակութային մարդկային հաւաքականութիւն երեւոյթին, ինչպէս յաճախ կրկնած եմ, հայ քաղաքական միտքին եւ առաջնորդութեան համար, ԱԶԳԻ ԻՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ համար, ան կառքին հինգերորդ անիւր չէ, պէտք է ըլլայ, որպէսզի ըլլայ եւ գործէ որպէս ազգի գոյացման լիբրաւ բաղկացուցիչ, ինքզինք պէտք է սահմանէ ըստ ազգի իրաւունքի պաշտպանութեան եւ վերականգնումի՝ յառաջացնելով ուրոյն կազմակերպութիւն, որպէս առաջադրանք ունենալով ազգի եւ հայրենիքի Միացում-Մէկութիւնը, այսինքն սփիւռքը պէտք է հանդէս գայ հայրենիքի եւ ազգի իրաւ տիրութեամբ:

Աւանդութիւն դարձած է սփիւռքը գիտել որպէս բարեսիրական հաստատութիւն, քիչ մըն ալ՝ որպէս քաղաքական խօսքի եւ աղմուկի արձագանգի տուփ, ինչպէս կ'ըլլան նուազարաններու արձագանգի տուփիկները, caisses de résonnance: Այդպէս էր խորհրդային օրերուն, վարժութիւն, որ կը տեւէ, սփիւռքն ալ կարծէք վարժուած եւ գոհացած է այս ազգին յարաբերաբար լուսանցքային դերով: Ընկերաքաղաքական հոլովոյթը այնպէս է, որ արմատներէ առաւել կամ նուազ չափերով հեռացած եւ քաղքենիացած «սփիւռք»-ները սովորաբար կը գոհանան չանհանգստացնող երեւելիութեան եւ էսթեպլիշմընթային այդ դերով:

Սփիւռքը, ըլլալով յոգնակի, ոչ մէկ տեղ եւ ոչ ոքի համար ներկայացուցչութիւն է՝ սկսելով հայկական պետութենէն, հանրապետութենէն, ուր քաղաքականութեան եւ ազգի պատմութեան ընթացքին մէջ ներկայութիւն ըլլալու իրաւունքներ չունի: Աւելի պարզ խօսելով՝ սփիւռքը, հայկական պետութեան հետ եւ պետութիւններու հետ, որպէս հայրենահասնուած գաղթականութիւն խօսելու համար ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՈՒԹԻՒՆ չունի, ունի գանազան անուններով եւ յաւակնութիւններով ներկայացուցչութիւններ, յաճախ՝ մրցակից եւ զիրար հակասող, զիրար խոչընդոտող եւ ինքնակոչ:

Պարզ խօսելով՝ ազգի կէսէն աւելի համարները դերակատար եւ առաջնորդող քաղաքական ազգակ չէ:

Նկատի ունենալով հայ պատմութեան ներկայ փուլի գոյութեանական սպառնալիքները, հայ քաղաքական միտքը, Հանրապետութիւն եւ տեւաբար յոգնակիացող, սփիւռք(ներ)ը, կրնա՞յ ընել այնպէս, որ հայրենատիրական ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՈՒԹԵԱՆՈՒԹԵԱՆ օժտուի ԱԶԳԻ ԹՈՒԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ, գործէ՞

լրացնելով հանրապետութիւն Հայաստանը, որպէսզի ան իրողապէս դառնայ բանիւ եւ գործով ՀԱՄԱՅՆ Հայութեան պետութիւն, ըլլայ յառաջապահ հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքի վերականգնումին եւ անոր դէմ գործուած ՄԵԾ ՈՃԻՐ-ը ՍՐԲԱ ԳՐԵԼՈՒ ՊԱՅՔԱՐԻՆ: Միշտ պէտք է գործել՝ գիտնալով, որ ցեղասպանութիւն եւ հայրենահանում ազգի եւ հայրենիքի երթը կասեցուցած են: Հայ քաղաքական միտքը, գերանցելով ինչ որ թշնամիներ պարտադրած են, քաղաքական համարուած եւ այլ հոգեբարոյական բաժանումները, պէտք է ունենայ Մէկութեւն եւ ՄԻԱՅՄԱՆ առաջադրանք:

Առանց պարտուածի հոգեխոցի տուայտանքներու, համայն հայութիւնը, իր իրաւունքի անշրջանցելի իրաւունքներու վերականգնումը որպէս պատմական-քաղաքական միացեալ եւ միացնող հրամայական ընդունելով, առաջնորդող ներկայացուցչութիւն եւ կամք պէտք է ունենայ:

Կը մտածե՞նք, որ եթէ այդ կամքը չունենայ, ի՞նչ կ'ըլլան հետեւանքները հայ ժողովուրդին եւ անոր հայրենիք Հայաստանի համար, զոր սովորութիւն դարձուցած ենք կոչել «պատմական», ուրկէ հայրենահանուած է ազգը:

Պատմութիւնը փակուած գիրք չէ: Պատրաստ պէտք է ըլլալ այն օրուան համար, երբ պատմութիւնը օղակ կը փոխէ: Ինչպէս օղակ փոխեց Խորհրդային Միութեան փլուզումով: Կարծէք պատրաստ չէինք այդ քաղաքական օղակ փոխելու պահուն, չիրականացուցինք թաղային եւ համայնքային անդին եղող Մէկութիւն-ՄԻԱՅՈՒՄ-ը՝ ե՛ւ ներսը ե՛ւ դուրսը, մնացինք խարխափումի եւ տուայտանքի մէջ, անբովանդակ իշխանատենչութիւններու հարայ-հրոցի աղմուկ իրարանցումի մէջ:

Պէտք չէ հետեւիլ ներսի եւ դուրսի այն բոլոր տեսակի «էսթեպլիշմընթ»-ներուն, որոնք կը գոհանան աթոռ-աթոռակի զուարճութիւններով եւ ազգային գիտակցութիւն եւ ՀԵՌԱԿԱՆ ՍՓՈՒՐՔԸ համայն ազգին:

ԱԶԳԻ ապագան առկայ է իւրաքանչիւր հայու մէջ:

Իրաւ առաջնորդը, առաջնորդող ՄԻՏՔ-ը այդ առկայութիւնը կը վերածեն շնչառութեան, յանձնառութեան եւ միացման:

Կրկին կը մտածեմ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի յայտարարած «ՍՓՈՒՐՔԻ ՏԱՐԻ»-ին մասին:

Իրենք գիրենք քաղաքական առաջնորդութեան կոչած ղեկավարներ եւ մտաւորականներ ինչո՞ւ այդ տարին չդարձուցին վերականգնումի քաղաքական միտքի ճառագայթման հարթակ եւ չիրականացուցին թաղային եւ համայնքային անդին եղող Մէկութիւն-ՄԻԱՅՈՒՄ-ը:

Իսկ միանալու եւ մէկութիւն ստեղծելու համար պէտք է ճանչնալ ՀԱՅ-ը եւ ՀԱՅԵՐ-ը, գիտնալ, թէ ո՞ւր են անոնք՝ որպէս թիւ, եւ բոլոր ճակատներու վրայ որպէս անդրանձնական հոգեբարոյական արժէք եւ յանձնառու ուժ, որ կը նայի եւ կ'ընթանայ ԱԶԳԻ ՎԵՐԱԿԱՆ ԳՆՈՒՄ-ի չզրկվալով ուղիով, առանց հրէի եւ հեթանոսի ետերու, ամէն տեսակի տեղայնութիւններու եւ սարկացումներու տուրք տալու:

Ազգի վերականգնումը ինչպէ՞ս իրականացնել, գերանցելով, մեղմ ըսած, մեր բազմապատիկ եւ անոյ տարբերութիւնները:

Ազգը, ներսը եւ դուրսը, պատրաստ է ՎԵՐԱԿԱՆ ԳՆՈՒՄ-ի, պատրաստ ենք մեր մէջ որպէս ցեց կպած մեծ եւ պզտիկ անկարեւոր կարեւորութիւնները յաղթահարել:

Ինչպէս յաճախ մէջբերելով կը կրկնեմ, այս աշխատանքը այսօ՛ր պէտք է ընել: Զխուսափելով հայելիին առջեւ կանգնելով ինքզինքին հաշուետուութիւն ընելէ, ըլլանք մեծ թէ փոքր, էսթեպլիշմընթ թէ շարքային հայ, ինքնագոհութեան օձի շապիկէն կամ կրիայի ինքնապաշտպանութեան պատեանէն հրաժարելով: Այս վերականգնելու եւ մեծնալու առաջին քայլն է: Անվաւրան պէտք է առնել յաջորդ քայլերը, նոյնիսկ եթէ անոնց համար սուղ գին պէտք է վճարել:

Յրանաւն կը տօնէ ազատութեան, արդարութեան եւ իրաւունքի դարազուլու բացած Պատիւի գրաւումը: Համաշխարհային տարողութեամբ պատմական իրադարձութիւն մը:

Հայն ու հայութիւնը ե՞րբ եւ ինչպէ՞ս պիտի իրականացնեն ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆ ԳՆՈՒՄԻ ԻՐԱԿ ՄԵԾ ԻՐԱԿԱՆ ԳԱՐՁՈՒԹԻՒՆԸ՝ հեռանալով թաղայինէ, տեղականէ եւ տեղայնականէ:

Յ. ՊԱԼԵԱՆ



# ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ, ԹԻՒ 1, Դեկտեմբեր 2023



## ՏԱՌԱՊԱՆՔԸ՝ ՈՒՂԻ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՓԱՌՔԻ

**«Եթէ Քրիստոսի չարչարանքներուն մասնակից կ'ըլլանք, Անոր փառքին եւս մասնակից կ'ըլլանք» (Հռ 8.17):**

Պօղոս Առաքեալ հոռմայեցիներուն ուղղած նամակին մէջ կը քաջալերէ իր չարչարակից քրիստոնէայ հաւատացեալներուն, ունենալու յոյս՝ հաւատքի ճանապարհորդութեան ընթացքին: Առաքեալը յաճախ կ'անդրադառնայ այս թեմային իր նամակներուն մէջ, խօսելով՝ դժուարութիւններու, նեղութիւններու, տառապանքի եւ մանաւանդ փորձութիւններու մասին, որոնք կ'ունենանք յաճախ՝ յանուն մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի: Ծիշո՞ղ է, որ հաւատքի ճանապարհորդութիւնը հեզասահ ընթացք չ'ենթադրեր, միշտ առկայ է դժուարութիւնն ու նեղութիւնը եւ յաճախ ցատտ է այդ ճանապարհը, սակայն եւ այնպէս կը վստահեցնէ Առաքեալը, որ մենք առանձին չենք այդ ճանապարհին, մասնակից ենք նաեւ Քրիստոսի չարչարանքներուն, եւ բնականաբար կը նոյնանանք Իր հետ եւ կ'ունենանք յոյսը մասնակից դառնալու Անոր Փառքին:

Հետեւաբար մեր դժուարութիւնները, տառապանքներն ու փորձութիւնները հաւատքի ոսպնեակի մէջէն դիտուած, ուրիշ բան չեն ենթադրէր եթէ ոչ խորացում մեր եւ Աստուծոյ յարաբերութիւններուն մէջ:

Որպէս ճշմարիտ հետեւորդները Քրիստոսի կանչուած ենք նմանելու Իրեն: Տառապանքը անխուսափելի մասն է մեր կեանքին, սակայն միաժամանակ յոյսի փարոս է խոստումը՝ Անոր փառքին մասնակից դառնալու:

Տառապանքը անպայմանօրէն չ'ենթադրէր ինքնին ի սկզբանէ փառքի տանող ճանապարհ, այլ յանուն Քրիստոսի տառապանք յանձն առնելը, Քրիստոսի օրինակով ունենալու տոկունութիւնը եւ դիմանալու տառապանքին, ինքնին մեզ կ'առաջնորդէ հոգեւոր աճման եւ Աստուծոյ հետ յարաբերութեան խորացման եւ առաւել սերտացման:

Մէկ խօսքով տառապանքի եւ դժուարութեան մէջ պէտք է նպատակ որոնել, նմանելու մեր տիրոջ: Այո՛, պէտք է հաւատքով տոկալ ու հանդուրժել՝ համահունչ Քրիստոսի ուսուցումներուն, այն ատեն կարելի է ունենալ աւելի խոր հոգեւոր ըմբռնում եւ գտնել ելքը վերջնական յաւերժական փառքին:

Առաքեալը կ'ըսէ. «Դուք ձեզ շատ երջանիկ համարեցէք, երբ զանազան փորձութիւններու մէջ կ'իյնաք: Գիտցէք, որ փորձութիւնը համբերութիւն կը ծնի, եթէ ձեր հաւատքը փորձին դիմանայ: Իսկ համբերութիւն պէտք է ունենալ մինչեւ վերջ, որպէսզի ամբողջական եւ կատարեալ ըլլաք, եւ ձեզմէ՛ ռեւէ՛ բան չպակսի» (Յակոբոս 1.2-4):

Հետեւաբար պէտք է քաջալերենք միմեանց նոյնանալու Քրիստոսի, եւ մանաւանդ համբերութեամբ, հաւատքով եւ իմաստութեամբ մասնակից դառնալու իր չարչարանքներուն, այն ատեն կը գտնենք ելքն ու ուղին ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՓԱՌՔԻՆ:

**ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Յիսուս Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան ընթացքին, իրեն համար օգնականներ ընտրեց, որոնք սատար հանդիսացան Աստուծոյ բարի լուրին ու Լոյսին տարածման նուիրական աշխատանքին մէջ: Անոնք Առաքեալներ կոչուեցան, որոնք զացին ու տարածեցին Քրիստոսի խօսքը, վկայեցին Անոր մասին եւ դարձան լոյսն ու աղը այս աշխարհին:

Առաքեալները ականատես դարձան Քրիստոսի կատարած բժշկութեանց ու հրաշքներուն: Ականջալուր եղան անոր քարոզներուն ու պատմած առակներուն: Անոնց զօրացուց ըսելով, որ իրենց հետ պիտի ըլլայ մինչեւ աշխարհի վախճանը: Համարձակութիւն տուաւ անոնց, ըսելով, որ դուք պիտի չխօսիք, այլ Սուրբ Հոգին ինք պիտի խօսի ձեր միջոցաւ:

Այս բոլորով հանդերձ, առաքեալները չկորցան հասկնալ ամէն բան: Ժամանակի ընթացքին անոնց մէջ վէճ կը ծագի, թէ ով է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը կ'առնէ իր մօտ եւ կ'ըսէ. «Ով որ այս մասնուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ ընդունած կ'ըլլայ զիս զրկողը: Որովհետեւ ով որ ձեր բոլորին մէջ փոքրիկն է, ան է մեծը» (ՂՈՒԿԱՍ 9.48):

Մեր առօրեայ կեանքին ընթացքին, յաճախ մենք ալ կը մտածենք, թէ մեզմէ ով է մեծը: Երբեմն կը փորձենք ուրիշ մը վար առնելով՝ բարձրանալ: Երբեմն կը տառապինք մեծնալու եւ մեծ ըլլալու բարդոյթէն: Երբեմն կը կարծենք, որ ամէն մարդ մեզի պարտաւոր է եւ կը սկսինք անհաշիւ հաշիւ պահանջել: Երբեմն մեծնալու ետեւէն երթալով կը կորսնցնենք նաեւ մեր յարգանքը ուրիշներու նկատմամբ: Բնական է, տկար արարածներ ենք եւ պիտի ունենանք այսպիսի պահեր:

«Ով որ այս մասնուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ ընդունած կ'ըլլայ զիս զրկողը: Որովհետեւ ով որ ձեր բոլորին մէջ փոքրիկն է, ան է մեծը» (ՂՈՒԿԱՍ 9.48): Քրիստոս իր այս խօսքով, կը հրաւիրէ մեզմէ իրաքանչիւրին ըլլալու մանուկի պէս: Խոնարհութեան, հեզութեան ու պարզութեան կը հրաւիրէ Յիսուս: Աստուածորդին կը սորվեցնէ մեզի, թէ պարզութեան մէջ է մեծութիւնը: Խոնարհ մարդը միայն պատիւի կ'արժանանայ: Հեզ ու յարգալից մարդը միայն կը մեծնայ մարդոց աչքին եւ ամէնէն կարեւորը Աստուծոյ աչքին:

Երբ Յիսուս կ'ըսէ փոքր եղէք, ըսել կ'ուզէ քննադատող մի՛ ըլլաք, սիրող եղէք, ազնիւ եղէք, ողորմած եղէք, ներող եղէք, ուրիշները ընդունող եղէք, ձեր բարեկամներուն, ընկերներուն եւ կամ հարգատներուն հետ սիրալիր եղէք: Տօնական այս շրջանին մեզ կը հրաւիրէ դառնալու Աստուծոյ որդիներ, ուրիշները ուրախացնելով: Մեր նմանները, մեր հայրենակիցները բարձրացնելու եւ անոնց կողքին ըլլալու:

Ա՛յս է պատգամը Քրիստոսի: Ազնութեամբ, պարզութեամբ, խոնարհութեամբ եւ սիրալիր մօտեցումով բարձրացնել ուրիշները՝ բարձրանալու Աստուծոյ աչքին:

**Հայր Յակոբ**

## ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն՝ ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եղէք նոր մարդ մը՝ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած, եւ ապրեցէ՛ք ճշմարիտ կեանքը՝ արդարութեամբ ու սրբութեամբ» (Եփեսացիս 4.22-24):

“You were taught, with regard to your former way of life, to put off your old self, which is being corrupted by its deceitful desires; to be made new in the attitude of your minds; and to put on the new self, created to be like God in true righteousness and holiness.” (Ephesians 4:22-24):





## ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

### ՇՆՈՐՀՔՆ ՈՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԻԱՅՆ ՏԻՐՈՋ ԿԱՌՉԻԼԸ (ԲԱԺԻՆ Բ.)

«Աստուծոյ խոստումներն ու մարգարէութիւնները կը կատարուին զանգան փորձութիւններու եւ դառնութիւններու միջոցաւ, եւ բոլոր անոնք, որոնք միայն Տիրոջ կը կանչին՝ կը փրկուին չարին փորձութենէն»:

Նոյնը պատահեցաւ նաեւ Մովսէսի հետ: Աստուած նախօրօք զայն ճանչցաւ ու իշխան կարգեց, որպէսզի Իսրայէլի ժողովուրդին ազատարարը ըլլայ: Աստուած զայն փարատնին աղջկան որդին դարձուց, եւ ան փարատնին պալատին մէջ թագաւորական հարստութեան ու փառքի շքեղութեան մէջ դաստիարակուեցաւ եւ «Եգիպտոսի ամբողջ իմաստութեամբ կրթուեցաւ» (տես Գործք 7.22): Եւ երբ հասունութեան տարիքը բոլորեց եւ ազդեցիկ դարձաւ, ինչպէս Պօղոս առաքեալ պիտի ըսէ, ան մերժեց այդ բոլոր երեւոյթները եւ նախընտրեց Քրիստոսի սիրոյն յանձն առնել նեղութիւնն ու անարգանքը, քան՝ կարճ ժամանակ մը մեղքերու հաճոյքը վայելել (տես Եբր 11.25):

Մովսէս Եգիպտոսէն փախաւ եւ երկար ժամանակ Մադիամի երկրին մէջ մնալով՝ որպէս հովիւ աշխատեցաւ: Եւ ան՝ որ իբրեւ թագաւորի գաւակ դաստիարակուեցաւ եւ պալատական բարիքներն ու հանգստութիւնը վայելեց, ի վերջոյ, իր ծով համբերութեան շնորհիւ՝ Աստուծոյ համար ընդունելի

ու հաւատարիմ նկատուեցաւ, որմէ ետք միայն Իսրայէլի ազատարարը, առաջնորդն ու թագաւորը եղաւ: Եւ Աստուած ըսաւ Մովսէսի. «Նայէ՛, քեզ փառաւորնիս աստուած ըրի» (Ելք 7.1), եւ իր միջոցաւ Եգիպտոսը բազմաթիւ պատիժներով հարուածեց եւ մեծ ու սքանչելի հրաշքներ ցոյց տուաւ: Եւ, ի վերջոյ, եգիպտացիները նաեւ Կարմիր ծովուն մէջ ընկղմեց: Ուստի, տես, թէ քանի՛ տարիներ ետք յայտնուեցաւ ու յայտարարուեցաւ Աստուծոյ կամքն ու մտադրութիւնը եւ քանի՛ փորձութիւններէ ու նեղութիւններէ ետք միայն իրականացաւ ու կատարուեցաւ այդ կամքը:

Աբրահամի պարագային ալ, նոյնպէս, բաւական առաջ Աստուած անոր խոստացաւ զաւակ մըր տալ, բայց անմիջապէս չտուաւ, այլ երկար տարիներ շարունակ զայն բազմաթիւ փորձութիւններու եւ նեղութիւններու մատնեց: Սակայն, Աբրահամ այդ բոլորը համբերատարութեամբ կրեց եւ հաւատքով զօրացաւ՝ վստահելով, թէ ան որ խոստացաւ, ճշմարտախօս է եւ չի կրնար ստել, որովհետեւ պիտի կատարէ իր խոստումը: Եւ այսպէս, ան հաւատաց եւ

ստացաւ իր խոստումը:

Նոյնը պատահեցաւ նաեւ Նոյի պարագային: Ան հինգ հարիւր տարեկան էր, երբ Աստուած անոր հրամայեց, որ տապանը շինէ՝ ըսելով, որ ջրհեղեղով պիտի ոչնչացնէ աշխարհը: Աստուծոյ ըսածը անմիջապէս չկատարուեցաւ, այլ՝ հարիւր տարի ետք միայն, երբ Նոյ վեց հարիւր տարեկան էր: Նոյ հարիւր տարի համբերութեամբ սպասեց եւ բնաւ չկասկածեցաւ Աստուծոյ իրեն ըսած խօսքին վրայ, այլ հաւատքով զօրացաւ, վստահ ըլլալով, որ այն՝ ինչ որ Աստուած իրեն ըսաւ, անպայման պիտի կատարուի: Նոյ իր ունեցած սրտի մաքրութեան, արդարութեան, հաւատքին ու համբերութեան շնորհիւ ընդունելի եղաւ Աստուծոյ մօտ, եւ այդ պատճառով ալ թէ՛ ինք եւ թէ՛ իր ամբողջ ընտանիքի անդամները (8 հոգի) փրկուեցան գալիք պատիժէն, որովհետեւ ան անարատութեամբ պահեց Աստուծոյ պատուիրանը:

**Մեծն Սուրբ Մակար (ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ 2)**

## ԱՐԴԻ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՅՐ ՄԵՐԸ

### ՄԻԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական, Ծաղիկներն ալ զայն ժողովուն ճամբուս վրան՝ Նայումքներուն մէջ ամէնուն եւ ամէն օր:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական, եւ ես՝ հանգոյն երփնալուցկի վառող մանկան՝ Ձայն գունաժպիտ տեսնեմ որիչ դէմքի մը վրան:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական, Ձանգակներն ալ զայն կախեմ ամէն դըրան՝ Ու գերթ նարօտ ամէն դըրան զայն պըսակեմ:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական, Ճրագներու ալ զայն բոցեմ բազմաստեղնեան՝ Խաւարին մէջ ամէն երդ ու խրճիթներու:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական, Ձայն սրբասաց իմ հոգեակիս ընեմ խորան՝ Ձայն իմ մտքիս ծըխեմ՝ գերթ խունկ բազմաբուրեան:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական, Ու չըլլայ որ ուրիշներու կոծն ու կական Խեղդել ուզեմ ջրվէժին մէջ դափիս ծայնին:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական, Ու չըլլայ որ ծափիս ծայնին երզը գուժկան Եսիս սենեակն ունենայ՝ ցուրտ առանձնարան:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական. Ու սեղանիս վըրայ դրուած մէն մի նըկան՝ Ձուրք մը խիւղէր գէթ ունենայ թող խաչանիշ:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական, Ու բախեմ զայն սրտիս ժայղին՝ իբրեւ մական՝ Որ բխեցնէ ջուրն աներկմիտ երանութեան:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական. Ձայն ջուրերու վըրայ ձըգեմ իբրեւ ուռկան, Ձայն իբր արօր ակօսներուն ձըգեմ վըրան:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական. Ձայն իբր անձրեւ ցօղեմ ամէն դաշտի վըրան, Ձայն իբր արեւ բաշխեմ ամէն հորիզոնի:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական. Ձայն ընդգրկեմ՝ իտեալին ըլլամ սրկան. Ձայն լաստ ըրած ես Լոյսերու նաւորդն ըլլամ:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական. Ժողովել՝ հոգոյն մէջ ծերերուն, կոյսին, մանկան, Պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանտորին:

Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական. Ժողովել՝ հոգոյն մէջ ամէնին, համայնական Հոգոյն ամէն մասնակներուն մէջ՝ ամէն ժամ:

Ճամբաներէն, ու գետերէն, ու դաշտերէն, Անտառներէն, ու լեռներէն, ու ձորերէն, Տանիքներէն, ու տուններէն, ու դուռներէն՝ Տնօր ինծի, Տէր, ուրախութիւնն անանձնական:

## ԿՈՐՍՈՒԱԾ ԱՐԺԱՆԻՔԸ

Հայ Առաքելական սուրբ եկեղեցին Սուրբ Ստեփանոսի տօնը կը նշէ Դեկտեմբեր 25-ին, եւ կամ յաջորդ օրը եթէ օրը կիրակի է:

Սուրբ Ստեփանոս, հաւատքով եւ Սուրբ Հոգիով լեցուն ծառայող մարդ մըն էր, բոլոր Մարտիրոսներուն անդրանիկը, Քրիստոսի նախավկան:

Քրիստոս իբրեւ Աստուած աշխարհ գալով ծառայեց, իսկ Ստեփանոս իբրեւ երիտասարդ սարկաւազ, Քրիստոսի օրինակով դարձաւ ծառայութեան անմահ նախատիպը: Դարձաւ անձ մը, որ ոչ միայն քարոզեց խօսքով, այլեւ գործով, կեանքի օրինակով: Անձ մը, որ ոչ միայն սիրոյ մասին խօսեցաւ, այլ այդ սէրը ապրեցաւ Քրիստոսի օրինակով, իր թանկագին կեանքը նուիրելով յանուն ծառայութեան:

Սուրբ Ստեփանոս առաքելներուն կողմէ ընտրուած եօթը սարկաւազներէն մին էր: Սարկաւազները Քրիստոնէական եկեղեցոյ առաջին սպասաւորներն էին: Անոնք աղքատներու եւ կարիքաւոր մարդոց սպասարկութեան պարտականութիւնը ստանձնած էին եւ այդ իսկ պատճառով Սարկաւազ բառը կը նշանակէ սպասաւոր ծառայող, օգնական:

Ծառայութիւնը մարդկային արժանիք մըն է, որ բոլորս ալ կը վայելենք: Որովհետեւ Աստուծոյ նմանութեամբ ու պատկերով ստեղծուած արարածներ ենք, սակայն շատ անգամ կը կորսնցնենք այդ արժանիքը մեր մէջ՝ մեր սկզբունքներուն եւ մեր Եսասիրութեան պատճառով եւ ահա թէ ինչու ծառայութիւնը խոնարհութիւն կը պահանջէ: Սակայն խոնարհ ծառայութիւնը ունի իր սկզբունքները:

Առաջին՝ Սուրբ Հոգիով առաջնորդուիլ, իսկ երկրորդ՝ ամուր հաւատքով ծառայել եւ այդ իսկ պատճառով Անտարանն ալ մեզ կը տեղեկացնէ ըսելով, որ Սուրբ Ստեփանոս այս երկու սկզբունքները կը վայելէր:

Երբ կը ծառայէր, հաւատքով կը կատարէր իր նուիրական աշխատանքը, որովհետեւ կը հաւատար, որ «հաւատքը առանց գործերու մեռած է» (Յկ 2.26): Քաջ էր իր ծառայական դաշտին մէջ, որովհետեւ Սուրբ Հոգին էր զինք առաջնորդողը եւ Սուրբ Հոգիով առաջնորդուող անձ մը երբեք չի վախնար: Վախը կաշկանդելով մեզ կրնայ դէպի անտարբերութեան առաջնորդել, իսկ Սուրբ Հոգիէն բղխող քաջութիւնը դէպի՝ անձնուէր ու հաւատքով առաջնորդուած ծառայութեան, ի սէր Աստուծոյ փառքին եւ ի սէր մարդոց բարիքին:

**Տէր Նշան**

## PRAYER

When we know that we are never alone, we change our strategy for prayer and pray to that which we are already connected to; the highest, most sacred aspect for our own being. If God is everywhere, then there is no place that God is not, including within ourselves. Armed with this awareness, we can pray and ask for nothing but our own moral strength. Instead of asking to be sheltered from danger, we ask for the strength to be fearless. Rather than asking for the removal of pain, we seek the ability to transcend and conquer it. We no longer assume that we know what we need and what will help us in this moment. Yet our experience teaches us that many of the things that we would never have requested have turned out to be the most beneficial.

**WISDOM OF AGES  
WAYNE W. DYER**

## ԱՌԱԿՍ ՁԻՆՉ ՑՈՒՑԱՆԷ...

### ԳԵՏԵՐՈՒՆ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Լեռներուն պէս, նաեւ գետերէն իւրաքանչիւր ինքզինք առաջնային կը նկատէր ուրիշներէն: Այսպէս Փիտոնը, Գեհոնը, Տիգրիսը, Եփրատը, Կուրը, Արաքսը, Պատատանին եւ ուրիշներ: Մինչ առաջին կը դատուի Յորդանան գետը, Տէրը հոն մկրտուելուն համար:

**Այս առակը յարակ է. ճշմարտութիւնը աւելի ուժեղ է քան երեսոյթը:**

### ԱՂԲԻՒՆԵՐՈՒՆ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Նոյն փորձութիւնը ունեցան նաեւ աղբիւրները՝ ինչպէս Պարսկաստանի մէջ գտնուող աղբիւր մը որ Նեղոսի դուտար համարուեցաւ, նոյնպէս Անտիոքի, Արիթուայի եւ այլ աղբիւրներ: Բայց պատուական համարուեցաւ ան, որ դրախտը կ'ոռոգէ:

**Այս առակը կը նշանակէ, որ իւրաքանչիւր աղբիւր մարդկային իմաստութեան օրինակ է, իսկ դրախտը ոռոգողը՝ Աստուածային իմաստութեան: Որովհետեւ մարդը դրախտն է, ծառերը առաքիւնութիւններ եւ աղբիւրը՝ հոգեւոր գիտութիւն, որ առաքիւնութիւնը կ'ոռոգէ:**

**ՄԻՒԹԱՐ ԳՕԸ**





## ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

Կրնան օգնել փոքրիկներուն, որ կարենան հասնիլ Եկեղեցի եւ վայելել տօնական մթնոլորտը:



### ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

#### Ինչ է հաատը:

Հաատը, բառին կրօնական առումով, կը նշանակէ ամուր վստահութիւն աստուածային ճշմարտութիւններու վրայ: Իսկ Պօղոս Առաքեալ այսպէս կը սահմանէ հաատը.- «Յուսացուած բաներուն հաստատութիւնն է եւ չտեսնուած բաներուն ապացոյցը կամ ստուգութիւնը» (Երբ 11.1):

#### Կարելի է հաատալ չտեսնուած բաներու:

Այո: Շատ բան կայ այս աշխարհի մէջ, նոյնիսկ մեր շուրջ, զորս չենք տեսներ կամ չենք կրնար տեսնել, բայց գիտենք եւ կը հաատանք որ կան անոնք:

#### Կրնան օրինակներ տալ:

Այո: Նախ՝ նիւթական բաներ. զոր օրինակ, մեր չտեսած երկիրներ, քաղաքներ, մարդիկ եւ այլն: Յետոյ՝ բարոյական բաներ, ինչպէս, առաքինութիւններ, յոյսեր, ապագաներ, եւ այլն: Վերջապէս՝ կրօնական ճշմարտութիւններ, զոր օրինակ՝ Աստուած, հոգի, հրեշտակ, եւ այլն, զորս չենք տեսներ, բայց, գիտենք եւ կը հաատանք որ կան:

#### Հաատը անհրաժեշտ պէտք մըն է մարդոց համար:

Այո: Մարդոց բոլոր գործերը հիմնուած են հաատի վրայ: Այս երկրագունդը, որուն վրայ կ'ապրինք, տիեզերքը կամ համագոյրը, որուն մէջ փոքրիկ մասն է այս երկրագունդը, լին ան այնպիսի իրողութիւններով, զորս չենք տեսներ մենք եւ չենք հասկնար, բայց գիտենք եւ կը հաատանք որ կան:

#### Կրնան բացատրել թէ Աստուած, որ չի տեսնուիր, իրօք կայ:

Այո: Ամէնէն առաջ մեր խելքն է որ կը սորվեցնէ մեզի, թէ Աստուած կայ: Որովհետեւ այս աշխարհի մէջ չկայ բան մը, որ չունենայ իր հեղինակը կամ պատճառը: Տուն մը, առանց շինողի, չի շինուիր ինքնին: Ժամացոյց մը կամ ռեւէ մեքենայ մը ինքնիրեն չի կրնար գոյութիւն ունենալ: Նոյնպէս այս երկրագունդը, այս տիեզերքը, այս օրիցութեան յայտնի եւ գաղտնի օրէնքներու հեղինակ մը, ստեղծիչ մը, արարիչ մը ունին, որուն անունը մեր լեզուին մէջ ԱՍՏՈՒԱԾ է:

#### Հաատը միայն Աստուծոյ գոյութիւնը ապացուցանելու համար պէտք է:

Ո՛չ: Մարդիկ իրենց բոլոր կեանքն ու գործը հիմնած են հաատի վրայ: Վաղը կամ ապագան անորոշութիւններ եւ անստուգութիւններ են. բայց մարդիկ հաատըով կ'ապրին, որովհետեւ իրենց բոլոր խորհուրդները եւ աշխատութիւնները վարուան, այսինքն ապագային համար են: Կրնանք ըսել նոյնիսկ, թէ հաատը հոգեկան կարողութիւն մըն է, որ հաասար կերպով չ'արտայայտուիր ամէն մարդու վրայ:

#### Ինչ է հաատին դերը կրօնի մէջ:

Կրօնը, կրնանք ըսել, թէ նոյնիսկն հաատն է. Որովհետեւ կրօններու ուսումնասիրութիւնը կը սորվեցնէ մեզի, թէ ինչպէս զարգացած է մարդոց հաատալու կարողութիւնը եւ ինչպիսի փոփոխութիւններ անցած է եւ ինչ հանգրուաններու է հասած՝ սկիզբէն մինչեւ այսօր:

#### Հաատի վերաբերեալ խնդիրներու մասին խօսելու ատեն, որ կէտին պէտք է ուշադրութիւն ընել:

Պէտք է ուշադրութիւն ընել, որ հաատը չ'փոխուի նախապաշարումներու հետ:

#### Ինչ է նախապաշարումը:

Նախապաշարումը տգէտ, ռամիկ մարդկութեան մէջ տիրող սխալ համոզումներու, կանխակալ կարծիքներու ամբողջութիւնն է, որոնց ծագումը ինն է, եւ որոնք, շատ կողմերով, կը շփոթուին հաատի հետ:

#### Մենք հայերս ալ ունինք նախապաշարումներ:

Անշուշտ ունինք: Հայեր բացառութիւն չեն կազմեր մարդկութեան մէջ: Նախապաշարումներ այնչափ կը շեշտուին որչափ մարդիկ չեն լուսաւորուիր ճշմարիտ հաատի լոյսով եւ ճշմարիտ կրօնի մը գիտութեամբ:

#### Ինչ է ուրեմն կրօնի մէջ նախապաշարումներէ զերծ մնալու միջոցը:

Պէտք է առաջնորդուիլ քրիստոնէական կրօնի սկզբունքներով, որոնց աղբիւրն է Նոր Կտակարանը, եւ մասնատրապէս Սուրբ Աւետարանը:

Որովհետեւ «Ճշմարիտ Աստուածապաշարութիւնը ո՛չ անհաւարտութիւն մըն է եւ ո՛չ ալ սակարկութիւն մը՝ անձնական արժանիքներ ստեղծելու համար իրեն, որ կը պակսին անոնք. այլ է՛ այն, ինչ որ աւանդական կամ փոփոխ կանոնապահութենէ մը անդին կ'անցնի ու կը ներշնչէ հեղինակի հոգեկան այն խորհրդաւոր բերումներուն, որոնք առանց զինքը զրկելու երկրաւոր կեանքի մը իրական պահանջումներէն, մօտ կը փակին Աստուծոյ պաշարումներին» (Եղիշէ Արք. Դուրեան):

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ  
ԲԱՐՔԸ Ա. ԿԱՌՈՂԻԿՈՍ

## ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԹԱԼՈՒ ԳԱՂՏԻՔՆԵՐԸ

Արքայութիւն երթալու համար պէտք է.

1. Փախչիլ մեղքի առիթներէն:
2. Պահել զգայարանքները, մանաւանդ այգերը:
3. Հեռու կենալ չար ընկերներէ:
4. Ստէպ աղօթել, մանաւանդ փորձութեան ատեն:
5. Ստէպ խոստովանիլ եւ հաղորդուիլ:
6. Մտածել մահուան, դատաստանի, դժոխքի եւ արքայութեան վրայ:
7. Ամէն տեղ եւ ամէն ժամանակ մտածել թէ Աստուած մեզ կը տեսնէ:
8. Միշտ եւ միշտ հետեւիլ խղճի ձայնին, որ մեզի Աստուծոյ կամքը ցոյց կու տայ:
9. Կարդալ հոգեւից գիրքեր մանաւանդ Աւետարանը:
10. Կարդալ սուրբերու վարքեր եւ նմանիլ իրենց:

### ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԽԱՉԱԿԵՔԵՆՔ:

Սկզբնական շրջանին խաչը խորհրդանշէ էր մահուան, չարարանքի ու անարգանքի: Իսկ Քրիստոսի զոհաբերումէն ետք, Խաչը քրիստոնէաներու համար դարձաւ յարթանակի ու պարծանքի նշան:

Խաչակնքելը Ընդհանրական Եկեղեցոյ հնաւանդ ու սրբազան ծիսական արտայայտչածն է, որ քրիստոնէաներու մօտ սկիզբ առած է դեռեւս առաքելական ժամանակներէն: Հաւատացեալը կը խաչակնքէ եկեղեցոյ արարողութիւններու ընթացքին, եկեղեցի մտած ու ելած ատեն, սրբանկարներու դիմաց աղօթելու, Ս. Հաղորդութիւն ստանալու, Աւետարանի ընթերցանութեան, խնկարկութեան, պատարագիչ քահանայի խաչակնք օրհնութեան կամ ռեւէ սրբութեան մօտենալու ատեն, ինչպէս նաեւ՝ վտանգի, վախի ու փորձութեան պահերուն՝ Աստուծոյ օգնութիւնը եւ Ս. Խաչին պահպանութիւնը խնդրելով:

Ուստի երբ կը խաչակնքենք, կը նշանակէ թէ մեր ամբողջ մարմինը, սիրտն ու հոգին Ս. Խաչին նշանովը կը կնքենք, որպէսզի չարը չկարենայ մեր վրայ յարձակիլ, մեզ ընկճել, նեղել կամ վրասել: Նաեւ խաչակնքելով կը յայտարարենք մեր քրիստոնէական հաւատը, ու կը դաւանինք Ամենասուրբ Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, ու ապա մեր անձերը աղօթելու կը պատրաստենք:

### ԴԱԻԹ ԵՒ ԳՈՂԻԱԹ

Փղշտացիները խրախնայեցան թշնամիներն էին: Օր մը անոնց բանակը կոտի ելաւ Սաւուրի բանակին դէմ: Անոնց հրամանատարը Գողիաթ անունով ամբարտաւան հսկայ մըն էր:

- Ով խրախնայեցան, ձեր ամենամոծող գինուրը կրնայ կոտիլ դէմս: Եթէ ինձի յարթ, մենք կը դառնանք ձեր ծառաները. իսկ եթէ ես յաղթեմ, դուք կը ծառայէք ինձի: Թող զայ տեսնեմ:

Սաւուրի գինուրները շատ վախցան: Այնտեղ էր նաեւ Դաւիթը. երբ տեսաւ Գողիաթը, ըսաւ.

-Ես կը կոտիմ, եւ գիտեմ որ Աստուած ինձի կ'օգնէ:

Դաւիթին տուին թագաւորի զգեստը եւ սուրը: Դաւիթի համար անոնք շատ ծանր էին: Գնաց գետին հաւաքեց ինչպէս հատ քար ու կանգնեցաւ հսկային դիմաց, որ սկսաւ ծիծաղիլ, տեսնելով փոքրիկ գինուրը:

Դաւիթը քար մը դրաւ պարսաւտիկին մէջ ու հարուածեց Գողիաթի ճակատին, հսկան գետին տապալեցաւ: Փղշտացիները երբ տեսան իրենց հրամանատարին սպաննութիւնը, անմիջապէս փախան:

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԱՆԿԱԵՐՏԻՆ ԳՐՔՈՅԿԸ

### ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ (ՄԱՏԹԵՈՍ 5.3-12)

Երանի՛ հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:

Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ՛ մխիթարութիւն պիտի գտնեն:

Երանի՛ հեզերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը:

Երանի՛ անոնց, որոնք արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, որովհետեւ անոնք պիտի յագեան:

Երանի՛ ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ՛ ողորմութիւն պիտի գտնեն:

Երանի՛ անոնց, որոնք սիրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն:


Երանի՛ անոնց, որոնք խաղաղութեան հաստատումին համար կ'աշխատին, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:

Երանի՛ անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնց է երկինքի արքայութիւնը:

Երանի՛ ձեզի, երբ մարդիկ նախատեն եւ հալածեն ձեզ, կամ ստելով՝ ձեր մասին ամէն տեսակի զրպարտութիւն ընեն իմ հետեւորդներս ըլլալու համար: Յնձացէք եւ ուրախացէք, որովհետեւ ձեր վարձատրութիւնը մեծ է երկինքի մէջ: Յիշեցէք որ նոյն ձեռով հալածանքի ենթարկուեցան ձեզմէ՛ առաջ ապրող մարգարէներն ալ:

### ԱՂՕԹՔ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԸՆ

Դուն՝ Յիսուս, Հօր իմաստութիւնը, իմաստութիւն տուր ինձի՝ որ ամէն ժամ բարի բաներ խորհիմ, խօսիմ եւ գործեմ քու ներկայութեանդ. չար խորհուրդներէ, խօսքերէ եւ գործերէ փրկէ՛ զիս. եւ ողորմէ՛ քու արարածներդ եւ ինձի՝ բազմամեղիս:



Ô Jésus, Sagesse du Père, donne-moi la sagesse de penser, de proclamer et d'accomplir le bien en Ta présence, a toute heure; délivre-moi de toute pensée, parole et action perverses, et aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur.

O Jesus, wisdom of the Father, grant me the wisdom to always think, speak, & do what is good in your sight; deliver me from every evil thought, word & deed, & have mercy on all your creatures & on me, a grave sinner!






ՍՈՒՐԻ ԱՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՍԱՐԿԱՒԱԳ

Ս. Ստեփանոս նախավկայ, անդրանիկ վկան է որ իր արհիւրը թափեց Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Որդին վկայելով: Յիսուսի 72 աշակերտներէն մէկը որ ուրիշ 6 հոգիներու հետ նախնական եկեղեցին (Պետրոս առաքելի առաջնորդութեամբ) կարգեց եկեղեցւոյ սեղանի սպասատր, այսինքն՝ սարկաւագ:


ՍՈՒՐԻ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ս. Պօղոս առաքել Պօղոս առաքել, Յիսուսի 12 առաքելներէն մէկը էր: Բուն անունով Սօղոս կամ Ասաուր, հրեայ բարեկեցիկ ընտանիքի մը զաւակն էր եւ դաստիարակուած էր ըլլալու կարծր եւ օրինապահ հրեայ մը, որ պայքարէր քրիստոնէութեան տարածման դէմ: Չորս անտարաններուն մէջ ունէ ակնարկութիւն չկայ Պօղոսի մասին: Կ'արժէ յիշել թէ Աստուածաշունչին մէջ Սօղոսի մասին առաջին ակնարկութիւնը կը տեսնենք Գործք Առաքելոց գիրքի 7.58-ին մէջ եւ կը կարդանք նաեւ թէ «Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօղոսն էր» (Գործ 8.1):




ՍՈՒՐԻ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Բուն անունով Սիմոն, ան Յիսուսի կողմէ Կեփաս՝ Պետրոս (Յի 1.42) անուանուեցաւ: Պետրոս կը նշանակէ վեմ, ժայռ: Յիսուս զայն Պետրոս կը կոչէ ըսելով. «Քեզի կ'ըսեմ՝ թէ ժայռ ես դուն, եւ այդ ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, զոր մահն անգամ իր ամբողջ զօրութեամբ պիտի չկրնայ յաղթահարել» (Մտ 16.18): Ս. Պետրոս այն առաքելն էր, որ Յիսուսի ձեռնադրութենէն ետք երեք անգամ ուրացաւ զԱյն (Մտ 26.69-75): Ան կը վերականգնուի իր պաշտօնին մէջ, Քրիստոսի հրաշափառ Յարութենէն ետք երբ Յիսուս երրորդ անգամ ըլլալով կ'երեմի աշակերտներուն: Յիսուս երեք անգամ կը հարցնէ Ս. Պետրոս Առաքելին, եթէ կը սիրէ զինք: Պետրոս Առաքել երեք անգամ կը պատասխանէ «Այո Տէր» եւ երեք անգամ Յիսուս զայն կը պատուիրէ, որ արածէ անոր ոչխարները (Յի 21.15-19): Ս. Պետրոս առաքել գրած է երկու ընդհանրական նամակներ, որոնք մաս կը կազմեն Նոր Կտակարանին: Առաջին նամակը՝ ուղղուած է «Աստուծոյ ընտրեալներուն», այսինքն՝ քրիստոնէաներուն: Անոր գլխաւոր նպատակն է քաջալերել ընթերցողները, որոնք իրենց քրիստոնէական հաստատեցողութեան համար հալածանքներու եւ նեղութիւններու դիմաց կը գտնուին: Ինչպէս նաեւ կը պահանջէ, որ ընթերցողները իրենց հաստատեցողութեան մէջ միշտ արթուն եւ պատրաստ ըլլան, սուրբ կեանքով եւ անկեղծ եղբայրութեամբ ապրին, եւ կենդանի տաճարներ ըլլան՝ ամբողջ հաստատուած Քրիստոսի ժայռին վրայ: Երկրորդ նամակը՝ ուղղուած է առաջին դարու քրիստոնէաներու լայն շրջանակի մը՝ նպատակ ունենալով պայքարիլ ստառ ուսուցանողներու տարած աշխատանքին դէմ: Մոլորեցնող ուսուցումներէ եւ անպարկեշտ կենցաղէ հեռու պահելու համար քրիստոնէաները, առաքելը կոչ կ'ուղղէ անոնց որ կառչած մնան Աստուծոյ եւ Յիսուս Քրիստոսի: Ան իր առաքելութիւնը կը ծաւալէ Պոնտոսի, Գաղատիայի, Բիթանիայի, Կապադովկիայի, Ասիայի եւ Հռոմի մէջ, ուր կը նահատակուի գլխավոր խաչելութեամբ:



Ս. ՅԱԿՈՒԲ ՄԾԲՆԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՍ

Հայ Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Սուրբ Յակոբ Մծբնացի Հայրապետի յիշատակը կը տօնուի ամէն տարի Յիսնակի երրորդ Կիրակի օրուան յաջորդող շաբաթ օրը: Այս կը նշանակէ թէ Սուրբ Յակոբի տօնը կը յիշատակենք Դեկտեմբեր 12-18 օրերուն մէջ հանդիպող Շաբաթ օրը: Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի հորաքրոջ որդին՝ Պարթեական տոհմէն: Անոնք միասին դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ: Ս. Յակոբ որոշ ժամանակ ապրած էր Պարսկաստանի արքունիքին մէջ, սակայն հետագային կ'ընտրէ ճգնաւորի կեանքը եւ Ս. Հոգիին ներգործութեամբ կ'ուղղուի Մծբնի քաղաքի վանքերէն մէկը՝ Մարուզէ ճգնաւորին մօտ: Երբ ան լեռներէն իջաւ մարդոց մօտ, տեղեկացաւ թէ Մծբնի շրջակայքի բնակիչները թէւ զարծի եկած են, սակայն ծարարանքով կը վերաբերին համաշխարհային ջրհեղեղին եւ Նոյեան տապալի պատմութեան: Հետեաբար Սուրբը ճամբայ ինչպէս դէպի Արարատ լեռ: Ան կ'ուզէր գտնել տապալէն կտոր մը եւ բերել ժողովուրդին անոնց անհատութիւնը փարատելու համար: Բայց լեռան գագաթը չհասած, Սուրբը կը քնանայ եւ Տիրոջ հրեշտակը հրաշքով մը Նոյեան Տապալէն խաչացեալ կտոր մը կը բերէ եւ կը դնէ Անոր գլխուն տակ: Մասնակցած է Նիկիոյ մէջ կայացած տիեզերական ժողովին 325 թուականին: Մծբնի աթոռին համար ծնունդորդած է եպիսկոպոս: Այս մասին մարգարէացած էր Մարուզէ ճգնաւոր: Հայ մատենագրութեան մէջ յայտնի են իր 22 ճառերէ բաղկացած «Ձգօս» գիրքը: Ս. Գրիգոր Նարեկացիին հիացող մը եղած է Յակոբ Մծբնացի Հայրապետին, որուն նուիրած է իր ներբողական գրութիւններէն մէկը: Սուրբ Յակոբին նուիրուած «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» անունով գեղեցիկ շարական մը գրուած է: Այս շարականը հասանաբար գրուած է այն դէպքին առիթով որ կը պատմուի թէ պարսից Շապուհ Բ. թագաւորը աշխարհածալայ իր արշաւանքներուն ընթացքին կը հասնի Մծբնի ու զայն կը պաշարէ 70 օրեր շարունակ: Շնորհիւ Ս. Յակոբի քաղաքին ներսէն կազմակերպած միջոցառումներուն, ան անկարող կ'ըլլայ գրաւելու Մծբնը:



ՈՐԴԻՔ ՈՐՈՏՄԱԼ

Յիսուս Քրիստոսի երկու աշակերտները՝ Ս. Յակոբոս Առաքել եւ Ս. Յովհաննէս Աւետարանիչ, իրենց բուն խառնուածքին պատճառաւ (Մր 3.17, Մր 10.35-41, Ղկ 9.54), Յիսուս Քրիստոսի կողմէ կոչուած են «Որդիք Որոտման»:

Ս. ՅԱԿՈՒՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ս. Յակոբոս Առաքել գալիլեացի ձկնորս մըն էր, որ իր եղբոր՝ Յովհաննէսի հետ կանչուած է՝ տասներկու առաքելներուն մաս կազմելու: Պետրոսի հետ միասին, անոնք առաքելներու կորիզը կազմած են, ակնատես ըլլալով Յայրոսի աղջկան յարութեան, Այլակերպութեան եւ Գեթսեմանի պարտէզի մատուցութեան: Առաքելը շատ եռանդուն էր, գործունեայ, մեծ սէր եւ նախանձախնդրութիւն ունէր Յիսուսի հանդէպ եւ դարձաւ Հրեաներու ատելութեան զոհը: Ս. Յակոբոս առաքելներէն առաջինն էր, որ 44 թուականին նահատակուեցաւ՝ Հերովդէս Ագրիպասի հրամանով (Գործ 12:1-2): Սպանիոյ հովանատր սուրբն է եւ, ըստ ասանդութեան, անոր մարմինը Երուսաղէմէն տարուած է Սանթիակո տէ՛ Գոմփոստելա, որ մօտ հազարամեակէ մը ի վեր ուխտագնացներու ժողովրդական հասցէ մը եղած է: Ս. Յովհաննէս Աւետարանիչ ալ ձկնորս էր: Մինչեւ Յիսուսի հետեւիլը, կը հետեւէր Յովհաննէս Մկրտիչին: Ան Յիսուսի ամենասիրելի առաքելն էր եւ հետեւեցաւ իրեն մինչեւ Գողգոթա: Իսաչին վրայէն Յիսուս իրեն յանձնեց իր մօր հոգատարութիւնը: Իր եղբոր Յակոբոսի եւ Պետրոսի հետ ան դարձաւ Երուսաղէմի եկեղեցւոյ սիններէն մէկը: Հետագային, իր գործունէութեան վայրը հանդիսացաւ Եփեսոսի եկեղեցին: Տիրոջ կամքով, Յովհաննէս Առաքել միւս առաքելներէն աւելի ապրեցաւ եւ վախճանեցաւ 94 տարեկանին: Անոր քարոզներուն կորիզը կը կազմէ սէրը (Ա. Յի 2.5, Ա. Յի 2.10, Ա. Յի 2.15-16, Ա. Յի 3.1, Ա. Յի 3.11, Ա. Յի 3.14, Ա. Յի 3.16, Ա. Յի 3.18, Ա. Յի 4.7-21, Բ. Յի 1.5-6): Ան գրած է Աւետարան մը, երեք ընդհանրական նամակներ, եւ Յայտնութեան գիրքը:



ՏՕՆԱՑՈՅՑ - ՆՈՅԵՄԲԵՐ

- Ուրբ. 1 Դեկտեմբեր – Պահք:
Շբթ. 2 Դեկտեմբեր – Տօն Սրբոց Առաքելոցն եւ Առաջին Լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի եւ Բարթողիմէոսի:
Կիր. 3 Դեկտեմբեր – Բ. Յիսնակի:
Բշ. 4 Դեկտեմբեր – Տօն Սրբոց՝ Գեներիոսի Եպիսկոպոսին եւ Մերկիտիոսի զինաւորին: Եւ Սրբոց՝ Յակովկայ եւ Իրաւափառայ:
Գշ. 5 Դեկտեմբեր – Տօն Սրբոյն Աբգարու նախավկայ եւ անդրանիկ հաւատացեալ թագաւորին մերոյ:
Դշ. 6 Դեկտեմբեր – Պահք:
Եշ. 7 Դեկտեմբեր – Տօն Սրբոց հարցն Եգիպտացոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եագրի, Յովհաննու Գբեցոյն, Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի, եւ այլոց սրբոց հարցն:
Ուրբ. 8 Դեկտեմբեր – Պահք:
Շբթ. 9 Դեկտեմբեր – Տօն Յղութեան սրբոյ Կուսին Մարիամու ՚ի լմենայէ:
Կիր. 10 Դեկտեմբեր – Գ. Յիսնակի:
Բշ. 11 Դեկտեմբեր – Տօն Սրբոց՝ Մինասայ, Երմոզիեայ, Եգրափոսի եւ կամաւոր աղքատացն՝ Յովհաննու եւ Ալեքսիանոսի:
Գշ. 12 Դեկտեմբեր – Տօն Սրբոց՝ Կուռնելիոսի հարիւրապետին, Շմաւոնի՝ ազգականին Քրիստոսի որ խաչեցաւ յերուսաղէմ, Պողիկարպոսի հայրապետին Ջմիւռնիոյ եւ սրբոց վկայիցն, որք լկրեւելս կատարեցան:
Դշ. 13 Դեկտեմբեր – Պահք:
Եշ. 14 Դեկտեմբեր – Տօն Սրբոց՝ Եստոռատիոսի, Օքսենտիոսի, Եգիւնէոսի, Ուրեստեսի եւ Մարդարիոսի:
Ուրբ. 15 Դեկտեմբեր – Պահք:
Շբթ. 16 Դեկտեմբեր – Տօն Սրբոց՝ Յակոբայ Մծբնայ Հայրապետին, Մարուզի Ծգնաւորին եւ Մելիտոսի Եպիսկոպոսին:
Կիր. 17 Դեկտեմբեր – Դ. Յիսնակի:
Բշ. 18 Դեկտեմբեր – Տօն Սրբոց Հայրապետացն՝ Իգնատիոսի, Ադդէի եւ Մարուբայի:
Գշ. 19 Դեկտեմբեր – Տօն Սրբոց՝ Թէոպոմպայ Եպիսկոպոսին եւ Թէոփայ վկային, եւ չորից զինաւորացն՝ ԲԱստի, Եսեթի, Եսիքի եւ Բասիլիդեայ:
Դշ. 20 Դեկտեմբեր – Պահք:
Եշ. 21 Դեկտեմբեր – Տօն Սրբոց Կուսանացն՝ Ինդրոսի եւ Դոմնայի, Գղերիկոսի քահանային, եւ երկուց բիւրուցն՝ որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացոց:
Ուրբ. 22 Դեկտեմբեր – Պահք:
Շբթ. 23 Դեկտեմբեր – Տօն Սրբոց՝ Դաթի մարգարէին եւ Յակոբայ Տեանտեղքօր Առաքելոյն:
Կիր. 24 Դեկտեմբեր – Ե. Յիսնակի:
Բշ. 25 Դեկտեմբեր – Տօն Սրբոյն Ստեփանոսի նախասարկաւագին եւ առաջին մարտիրոսին:
Գշ. 26 Դեկտեմբեր – Տօն Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի:
Դշ. 27 Դեկտեմբեր – Պահք:
Եշ. 28 Դեկտեմբեր – Տօն Սրբոց Որդոցն Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանիչն:
Ուրբ. 29 Դեկտեմբեր – Պահք:
Շբթ. 30 Դեկտեմբեր – Ա. Օր Պահոց Ծննդեան: Տօն Սրբոց՝ Բարսղի Հայրապետին եւ եղբոր նորին Գրիգորի Նիսացոյն, Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապետին եւ Աբբայ Եփրեմի Խուրին Անուոյ:
Կիր. 31 Դեկտեմբեր – Զ. Յիսնակի: Բ. Օր Պահոց Ծննդեան:

ՍՈՒՐԻ ԲԱՐԹՈՒՂԻՄԵՆՍ ԱՌԱՔԵԱԼ

Քրիստոսի լոյսը Հայաստան բերող երկրորդ աշակերտը եղաւ Բարթողիմէոս առաքել եւ արդարեւ Հայ եկեղեցւոյ կողմէ Ս. Թադէոս առաքելին հետ կոչուեցաւ «Առաջին Լուսաւորիչ»: Բարթողիմէոս առաքել Յովհաննու անտարանին մէջ ճանչցուած է Բաթանայէ անունով: Ան իր առաքելութիւնը կը ծաւալէ Պարսկաստանի մէջ, ուր կը քարոզէ քրիստոնէութիւնը եւ շատեր դարձի կը բերէ: Ան Պարսկաստանէ կ'անցնի Հայաստան, ուր Թադէոս առաքելին հետ կը քարոզէ քրիստոնէութիւնը: Բարթողիմէոս կը հասնի արքունիք, դարձի կը բերէ նաեւ Սանատրուկ թագաւորին քոյրը եւ թագաւորէն ձեռքաւարելով կը չարչարուի ու մորթագերծ ըլլալով կը նահատակուի:

ՍՈՒՐԻ ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Քրիստոսի լոյսը Հայաստան բերող առաջին աշակերտը եղաւ Թադէոս առաքել եւ արդարեւ Հայ եկեղեցւոյ կողմէ Ս. Բարթողիմէոս առաքելին հետ կոչուեցաւ «Առաջին Լուսաւորիչ»: Ան Աւետարաններուն մէջ զանազան անուններով կը յիշուի: Ճանչցուած է որպէս Դեթէոս, որ անուանուեցաւ Թադէոս (Մտ 10.3), Յակոբոս՝ Յոդայի եղբայրը (Ղկ 6.16), Յոդա՝ ոչ Իսկարիովուացի (Յի 14.22) եւ Յուդա Յակոբեան (Գործ 1.13): Թադէոս առաքել նախ կու գայ Եդեսիա, ուր կը բժշկէ Աբգար թագաւորը, որ Քրիստոսի նամակ դրկած էր եւ Անկէ բժշկութիւն խնդրած: Ապա կ'անցնի հայոց սահմանները, ուր կը քարոզէ քրիստոնէութիւնը եւ հրաշքներ կատարելով շատեր դարձի կը բերէ: Ան կը յաջողի նաեւ արքունիք հասնիլ: Օրոտան թագաւորն էր Սանատրուկ: Այնտեղ կը քարոզէ Քրիստոսի փրկութեան Աւետարանը: Հայոց թագաւորին դուստրը՝ Սանդուխտ կոյս կը լսէ Քրիստոսի մասին եւ իր կեանքը ամբողջութեամբ կը նուիրէ Անոր եւ քրիստոնէայ կը մկրտուի: Այս լսելով հայոց արքան կը զայրանայ եւ բազմաթիւ չարչարանքներ է զայն դարձի բերելու աշխատանքէն յուսահատ՝ կը նահատակէ կոյսը: Սանատրուկ թագաւոր, մեծապէս վշտացած իր դստեր նահատակութեամբ, կը հրամայէ ձեռքաւարել Թադէոս առաքելը եւ անտանելի չարչարանքներու ենթարկելէ ետք զայն եւս նահատակել կու տայ: Թադէոս առաքել կը նահատակուի Պարսկաստանի Ատրպատական գաւառի արեւմտեան կողմը՝ Արագոյ մէջ եւ այնտեղ կը թաղուի: Այժմ սուրբին գերեզմանին վրայ հոյակապ եկեղեցի մը կառուցուած է, ուր ամէն տարի սուրբին տօնին առիթով հանդիսարու Ս. Պատարագ եւ մեծաշուք ուխտագնացութիւն կը կատարուի:



## International Court of Justice orders Baku to ensure safe return of Artsakh residents

THE HAGUE—The International Court of Justice on November 17 ordered Azerbaijan to ensure the “safe and unimpeded” return of individuals who left Artsakh after September 19, when Azerbaijan launched a massive attack on Artsakh forcing the exodus of more than 100,000 Armenians from their homes.

The ICJ’s order was in response to Armenia’s application for what are known as “special measures.”

The ICJ, which is the United Nations’ highest judicial body, said that Azerbaijan “shall refrain from taking any actions directly or indirectly aimed at or having the effect of displacing the remaining ethnic Armenians from Nagorno-Karabagh, or preventing the safe and expeditious return to their homes of persons displaced in the course of the recent military attack, including those who have fled to Armenia or third States, while permitting those who wish to leave Nagorno-Karabagh to do so without any hindrance.”

The court said that Azerbaijan’s actions on September 19 took place under “the long-standing exposure of the population of Nagorno-Karabagh to a situation of vulnerability and social precariousness,” referring to Baku’s 10-month blockade of the Lachin Corridor.

In its ruling, the ICJ also re-

called its other ruling regarding the blockade noting that “the residents of this region have been severely impacted by the long-lasting disruption of the connection between Nagorno-Karabagh and Armenia via the Lachin Corridor.”

The ICJ said that Azerbaijan must ensure that “persons who have left Nagorno-Karabagh after 19 September 2023 and who wish to return to Nagorno-Karabagh are able to do so in a safe, unimpeded and expeditious manner; ensure that persons who remained in Nagorno-Karabagh after 19 September 2023 and who wish to depart are able to do so in a safe, unimpeded and expeditious manner; and ensure that persons who remained in Nagorno-Karabagh after 19 September 2023 or returned to Nagorno-Karabagh and who wish to stay are free from the use of force or intimidation that may cause them to flee.”

This interim decision will be finalized once Armenia has been allowed to comment on the ruling.

During Azerbaijan’s blockade of Artsakh, the ICJ ordered Baku to “ensure unimpeded movement along the Lachin Corridor.”

Azerbaijan ignored that order, despite numerous calls from the United States and the European Union and its member states.

## Azerbaijan proposes direct one-on-one peace talks with Armenia

BAKU—Azerbaijan has proposed to negotiate a peace treaty with Armenia through direct, one-on-one, negotiations at a mutually acceptable venue that includes the border between the two countries.

The proposal comes as Yerevan announced on November 21 that it has submitted another proposal to Baku on the peace agreement.

“Azerbaijan is ready for direct bilateral negotiations with Armenia for the early conclusion of a peace agreement,” Azerbaijan’s Foreign Ministry said in a statement.

“We believe that the two countries should decide the future of their relations together. This stagnation in negotiations does not contribute to the stability of the region,” it added.

“The responsibility for the continuation of the peace process, including the choice of a mutually acceptable venue or the decision to meet at the state border, belongs to the two countries,” said the Azerbaijani statement, which also urged Armenia to “avoid new unnecessary delays.”

Azerbaijan has been avoiding mediation efforts from the West, including overtures from

the United States and France. Baku canceled scheduled talks in Washington between the foreign ministers of the two countries, which was to be hosted by Secretary of State Antony Blinken.

President Ilham Aliyev of Azerbaijan also did not attend scheduled EU-mediate talks with Prime Minister Nikol Pashinyan in Granada, Spain last month, yet he demanded the “return” of eight Azerbaijani villages “occupied by Armenia.”

In its statement regarding the new proposals, Armenia’s foreign ministry said that Yerevan “remains committed to concluding and signing a document on normalization of relations based on previously announced principles.”

Yerevan’s statements followed Pashinyan’s remarks at the OSCE Parliamentary Assembly in Yerevan, where he urged Baku to commit to publicly commit to the key principles for the peace treaty, that include the recognition of each other’s territorial integrity, the delimitation of borders based on a 1991 treaty and the opening of regional trade routes.

In recent statement, Baku rejected mediation efforts by the U.S. and France for their so-called “pro-Armenian” bias.

## U.S. Senate unanimously adopts bill blocking U.S. military aid to Azerbaijan

WASHINGTON — Michigan Senator Gary Peters led the unanimous U.S. Senate passage of the “Armenian Protection Act of 2023” (S.3000) which aims to block all U.S. military assistance to Azerbaijan by removing President Biden’s authority to waive Section 907 of the FREEDOM Support Act for Fiscal Years 2024 and 2025.

The vote comes in response to mounting pressure from the Armenian National Committee of America, Congressional allies, and a diverse coalition of pro-Armenian civil society advocates in the face of Azerbaijan’s genocidal ethnic cleansing of Artsakh’s Christian Armenian population.

“We thank Senator Peters for his leadership and welcome the Senate’s adoption of S.3000 as a first step toward holding Azerbaijan accountable for its genocide of Artsakh and deterring renewed aggression toward Armenia,” said ANCA Executive Director Aram Hamparian.

“For his part, President Biden — given his role in arming Azerbaijan’s ethnic-cleansing of Artsakh — needs to do far more at this point than simply signal a willingness to enforce an existing U.S. statute, for example, by leading a UN Security Council resolution to establish an international mandate providing security for the safe and sustainable return of Armenians to Artsakh,” added Hamparian.

In remarks on the Senate Floor during consideration of the measure, Sen. Peters detailed Azerbaijan’s aggression against Artsakh. “Not only did they blockade the Lachin Corridor for 10 months, creating significant hardships, they also violently attacked innocent Armenians and forced the dissolution of the government of Nagorno-Karabagh on September 20th.”

Noting that President Biden failed to stop military aid to Azerbaijan in the face of their escalating aggression, Sen. Peters urged his Senate colleagues to act. “If we do not take action when countries willfully ignore the terms of our agreements with them, our agreements will become effectively meaningless and toothless,” stated Senator Peters. “I urge my colleagues to join me in holding Azerbaijan accountable for their actions, enforce our agreements with them, and stand with the Armenian people in the face of unprovoked aggression.”

Sen. Peters traveled to Armenia’s southern Syunik region in September to assess the devastating impact of Azerbaijan’s 10-month blockade of Artsakh. “This visit confirmed that we must do more to protect Armenian lives and prevent ethnic cleansing. Increased aid to the Armenian people is critical, and we must stop providing aid to Azerbaijan and impose targeted sanctions on the Aliyev regime,” stated Sen. Peters.

